

Մ. Ա. ՍԱՐԳՍՅԱՆ

== Պ Ե Տ Ա Կ Ա Ն ==

ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅՈՒՆՆ

== Ի ՍՊԱՍ ==

ԿՈՒՏՆՏԵՍԱՅԻՆ ԿԱՐԳԵՐԻՆ

368

U-25

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ ՀՍԽՀ ՅԺԿ ՊԵՏԱՊՈՒՎԱՐԶՈՒԹՅԱՆ



1936

Կուսակցութեանն ու կառավարութեանն մեծապես մտահոգված են, վորպեսզի այն հսկայական սոցիալիստական դուշը, վորն այժմ պատկանում է կոլտնտեսութեաններին ապահովված լինի ամեն տեսակ պատահական յերևույթներէց, քանի վոր սոցիալիստական սեփականութեանը խորհրդային կարգերի հիմքն է դարձել:

Պահպանել կոլտնտեսային գույքը, պահպանել տխուհները, պահեստները, պահպանել տրակտորներն ու մեքենաները, լավ խնամել ձիերին և մնացած գյուղատնտեսական անասուններին ահա թե ինչի մասին է կոչ արել ընկ' Սթալինը հարվածային-կոլտնտեսականների առաջին համագումարում: Տարերային ազետները (կարկտահարում, ցրտահարում, յերաշտ, հեղեղում, հրդեհներ, յերկրաշարժներ և այլն) և անասունների անկումը խոշոր վնասներ են հասցնում մեր գյուղատնտեսութեանը: Անշուշա, գյուղի կոլեկտիվացումն ու մեր գյուղատնտեսութեան մեքենայացումը զգալիորեն հեշտացնում են տարերային աղետների դեմ պայքարելու և կանխելու խնդիրը, նպաստում են հակահըրդեհային պաշտպանութեան բարելավմանը, ինչպես նաև անասնաբուժական-գոտտեխնիկական ցանցի ընդարձակմանն ու ագրոտեխնիկայի տարածման գործին: Կասկածից դուրս է և այն, վոր այս բոլոր ձեռնարկումները մեծապես կրճատում են տարերային աղետների հասցրած վնասները: Կուսակցութեան և կառավարութեան՝ զեպի կոլտնտեսութեանների կազմակերպչական-տնտեսական ամրացումն ուղղված ձեռնարկումներից մեկն էլ պետական ապահովագրութեանն է հանդիսանում: Պետական ապահովագրութեանը—պետութեան կազմակերպված ոգնութեանն է կոլտնտեսութեաններին, կոլտնտեսականներին և աշխատավոր մեծատնտեսներին: Ապահովագրութեանը, պաշտպանելով կոլտնտեսութեաններին, կոլտնտեսականներին և աշխատավոր մեծատնտեսներին՝ վաղվա կոլտնտեսականների տնտեսութեանները և հատուցելով նրանց այն վնասները, վոր առաջ են յեկել՝ հրդեհներից, ցանքերը, պտղատու և խաղողի այգիները, բանջարանոցներն ու բոստանները կարկտից, հեղեղումից և ֆոթօրիկներից, իսկ բամբակի ու ծխախոտի ցանքերը բոլոր տեսակի տարերային աղետներից, վնասատուներից և բույսերի հիվանդութեաններից փչանալուց, գյուղատնտեսական անասունների անկումից, հնարավորութեանն է տալիս տուժած տնտեսութեաններին, արագորեն ու հեշտութեամբ վերականգնել փչացած գույքը ու այս-

պիտով, մի հզոր գործիք է կոլտնտեսութեանների ամրացման և հասարակական սեփականութեանը պաշտպանելու համար:

Թե վորքան խոշոր է այն ոգնութեանը, վոր պետութեանը հասցնում է կոլտնտեսութեաններին և աշխատավոր մեծատնտեսներին ապահովագրութեամբ, յերևում է հենց այն բանից, վոր միմիայն ՀՍՍՀ-ում վերջին հինգ տարվա ընթացքում Պետապը վճարել է տուժած տնտեսութեաններին 9662,5 հազար ռուբլի ապահովագրական վարձատրութեան, իսկ ամբողջ Միութեան մեջ միմիայն վերջին յերկու տարվա ընթացքում (1934—35 թ.)՝ 437 միլիոն ռուբլի, ի հատուցում տարերային աղետների պատճառած վնասների: Այդ նույն ժամանակաշրջանում, այսինքն, 1931 թ. մինչև 1935 թ. պարտադիր կոպարային ապահովագրութեան գծով միմիայն ՀՍՍՀ-ում կոլտնտեսութեաններին արտոնութեաններ և զեղչեր է տրված ապահովագրական վճարումներով 2378,4 հազ. ռուբ. (միութեանական մասշտաբով 254 միլ. ռուբ.): Խոնչ է նշանակում այս Այդ նշանակում է, վոր խորհրդային պետութեանը ներգրում է գյուղատնտեսութեան մեջ միլիոններ:

Պետական ապահովագրութեանը վոչ միայն հատուցում է հրդեհներից, գյուղատնտեսական անասունների անկումից, կարկտահարումից և այլ աղետներից առաջացած վնասները, այլ և հոգում է նույն աղետների դեմ պայքարելու և դրանք կանխելու մասին, հսկայական դումարներ բաց թողնելով այդ նպատակի համար: Պետապի նմանորինակ ծախսերը տարեկց տարի աճում են: Այսպես, որինակ՝ միմիայն ՀՍՍՀ-ում այդ նպատակի համար բաց է թողնված յեղել՝ 1932 թ. 270 հազ. ռուբ., 1933 թ. 332 հազ. ռուբ., 1934 թ. 448,8 հազ. ռուբ., 1935 թ.—767 հազ. ռուբ., իսկ 1936 թ. պլանով յենթադրվում է ծախսել մոտ մեկ միլիոն ռուբ.: Միութեանական մասշտաբով Պետապն այդ նույն նպատակի համար ծախսում է տարեկան 110—120 միլ. ռուբ.:

Պետական ապահովագրութեան վերաբերյալ որենքները միանգամայն համապատասխանում են այն խնդիրներին, վորոնք զբված են կուսակցութեան և կառավարութեան՝ կողմից ամբողջ յերկրի առաջ գյուղատնտեսութեան զարգացման բնագավառում:

Ինչպե՞ս է նպաստում ապահովագրութեանն այդ խնդիրներէքի իրագործմանը:

Պարտագիր՝ ապահովագրութեան վերաբերյալ որենքում ամբողջովին արտացոլում են Համ Կ(ր)Կ Կենտկոմի 17-րդ համա-

գումարի և Հունիսյան պլինուսի վորոշումները կենդանաբու-  
ծության զարգացման մասին: Որենքը խթանում է մատղաշ  
անասունների աճեցումն ու պահպանումը: Այդ նպատակով ճրի  
աղանավագությունն և սահմանված մեկից մինչև յերկու տարե-  
կան հասակ ունեցող ձիերի, ուղտերի և այլ բանող անասուն-  
ների, ինչպես նաև վեց ամսականից մինչև մեկ տարեկան հա-  
սակ ունեցող խոշոր յեղջյուրավոր անասունների համար: Անց-  
յալ տարիներում այդ մատղաշները բոլորովին չեն ապահովա-  
գըրվել: Գյուղատնտեսական մատղաշ անասունների նման ճրի  
ապահովագրությունը միմիայն ՀՄԽՀ-ում Պետապին նստում է  
մոտ 400 հազ. ուղեր, իսկ վողջ Միության մասշտաբով 30—35  
միլիոն ուղեր: Այլ կերպ ասած, պետությունը դրանով իսկ ներ-  
դրում է գյուղատնտեսության զարգացման համար նոր 30—35  
միլիոն ուղեր:

Սորհուրդների 7-րդ համագումարն ընդունել է, վոր—

«Անասնաբուժական ապրանքային ֆերման կոլտնտե-  
սությունների հասարակական տնտեսություն կարևորա-  
գույն ողակներից մեկն է հանդիսանում, կարևորագույն  
գործիքներից մեկը կոլտնտեսության հարստությունն  
ավելացնելու և կոլտնտեսականների ունեվորությունն  
ապահովելու համար»:

Պետապը նպաստում է կոլտնտեսային ապրանքային ֆեր-  
մաներ կազմակերպելու գործին: Այդ ֆերմաներում գտնվող բո-  
լոր գյուղատնտեսական անասուններն ապահովագրվում են  
20% աշին գեղջով:

Նույնպիսի արտոնյալ պայմաններ են ստեղծված կոլտն-  
տեսությունների բոլոր ազնվացեղ անասունների ապահովագրու-  
թյան համար:

Բացի դրանից, այն կոլտնտեսություններին, վորոնք ճիշտ  
և բացիոնալ ձևով են վարում իրենց կենդանաբուժական արն-  
տեսությունը՝ աճեցնում և պահպանում են մատղաշներին, կա-  
ռուցում են տաքացվող գոմեր, ապահովում են անասունների  
կանոնավոր կերակրումն ու խնամքն ապահովագրական վճարու-  
մից խոշոր գեղջ և հատկացվում՝ մինչև 25%/-ի չափով:

Գարնան և աշնան ցանքերի ապահովագրության համար  
վճարումները գանձվում են վոչ թե փաստական տարածությունից,  
այլ պլանով սահմանված տարածությունից և այդ ճիշտ է, քա-

նի վոր դրանով խթանվում է պետական ցանքային պլանի կա-  
տարումը: Այսպիսով, պլանից դուրս ցանված գյուղատնտեսական  
մեակույթները Պետպն ապահովագրում է նրաբար: Իսկ ցանքե-  
րը կարկտից կամ այլ տարերային աղետներից փչանալու դեպ-  
քում վնասները վճարվում են փաստորեն ցանված տարածության  
համաձայն:

Կուսակցությունն ու կառավարությունն առանձին ուշա-  
դրություն են նվիրում ամենից արժեքավոր տեխնիկական և  
հատուկ գյուղատնտեսական մշակույթների զարգացմանը, որի-  
նակ, բամբակի, ծխախոտի, վուջի, և այլն, վորոնք վորպես հումք  
խոշոր նշանակություն ունեն մեր արդյունաբերության համար:  
Պետապը նպաստում է այդ մշակույթների տարածման գործին,  
դրանցից մի քանիսն, որինակ, վուջը բոլորովին ձրիաբար են  
ապահովագրում յերաշտից: Բամբակի և ծխախոտի ցանքերն  
ապահովագրվում են բոլոր տարերային աղետներից, վնասատու-  
ներից  
յունից: Սոչոր ոգնություն  
հասնելով կոլտնտեսություններին, կոլտնտեսականներին և աշ-  
խատավոր մենատնտեսներին, աալով նրանց լայն արտոնու-  
թյուններ, կուսակցությունն ու կառավարությունը միաժամա-  
նակ պահանջում են նրանցից աղնիվ աշխատանք՝ հողի լավ  
մշակում, ժամանակին ցանք, քաղհան, բերքահավաք և ագրո-  
նոմիական կանոնների կատարում:

2.

## ԼՈՒՐՁ ՈՒՇԱԴՐՈՒՅՈՒՆ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻՆ

Պետական ապահովագրության վրա կուսակցությունն ու  
կառավարությունը կարևոր և պատասխանատու խնդիր են դնում:

Կուսակցության Կենտկոմը 1933 թ. մարտին հայտնաբերեց  
և խիստ դատապարտեց կոպիտ խեղաթյուրումներն ապահովագրա-  
կան աշխատանքների մեջ գյուղում: Կորցնելով իրենց դասակար-  
գային զգոնությունն ապահովագրական աշխատողները մի շարք  
չըջաններում «տարերային աղետների» պատրվակի տակ հատու-  
ցել էյին այնպիսի վնասներ, վորոնք տեղի էյին ունեցել ակրն-  
հայտ տնտնտեսավորությունն ու վնասարարություն, գյուղատն-  
տեսական անասունների չարահան շահագործման հետևանքով:  
Այսպիսով, պետությունը խարելու միջոցով, վոչ միայն շառվել

եյրն պետական միջոցներն, այլ և ապահովագրական ակտերով քողարկվել դասակարգայնորեն ոտար տարրերի անտնտեսավարությունն ու բացահայտ վնասարարարությունը: Կենտրոնը մատնանշել է այդ խեղաթյուրումների խոշոր քաղաքական վնասը և առաջարկել՝

«Վճռականորեն ուժեղացնել ուղադրությունը դեպի ապահովագրական աշխատանքը գյուղում, կարճ ժամանակամիջոցում գուրս բերել այդ գործն անապաստան ու անխնամ վիճակից և դարձնել կոլտնտեսությունների ամբողջման և հասարակական սեփականության պաշտպանության իսկական լծակ»:

Ինքնին պարզ է, վոր ապահովագրական աշխատանքը ճիշտ կատարելու պատասխանատվությունը կրում է նախ և առաջ առաջնավագրական ապարատը: Ապահովագրական տեսուչներն և գյուղական ու շրջանային ապահովագրական հանձնաժողովների անդամները ՀՄԽԸ շրջանների մեծ մասում աշխատում են «գերազանց»: Սակայն, առանձին գյուղխորհուրդներում կան ապահովագրական հանձնաժողովներ, վորոնք անհոգի և ձևական վերաբերմունք են ցույց տալիս այս կամ այն դժբախտ պատահարից առեժամ տնտեսությանը: Հաճախ են այն դեպքերը, յերբ կոլտնտեսության մեջ, կոլտնտեսականի և մեծատնտեսի մոտ, դիցուք, բնկնում են անասունները կամ ցանքերը փչանում կարկտից, իսկ գյուղական ապահովագրական հանձնաժողովները ժամանակին ակտ չեն կազմում և դրա պատճառով ել ապահովագրական վարձատրության վճարումն ուղանում է յերկու և յերեք ամսով: Լինում է նաև, վոր գյուղական ապահովագրական հանձնաժողովը բարեխղճորեն և ժամանակին ակտ է կազմում, դիցուք անասունների անկման մասին, իսկ ապահովագրական տեսուչները և շրջանային ապահովագրական հանձնաժողովը չարաթյունով չի քննում այդ ակտը և այսպիսով, ապահովագրական վարձատրության վճարումը ձգձգվում է:

Իհի չեն նաև այն դեպքերը, յերբ առանձին անհատներ կոլտնտեսություններում ծածկում են ապահովագրական որգաններից տեղի ունեցած վնասները, որինակ, չեն հայտնում անասունի անկման մասին, վորպեսզի խույս տված լինեն պատասխանատվությունից ապահովագրված կոլտնտեսային գույքին անտնտեսավար վերաբերմունք ցույց տալու համար:

Ինչպես տեսնում եք Պետապի վրա խոշոր խնդիր է դրված: Այդ խնդիրը, ինչպես և յուրաքանչյուր տնտեսական-քաղաքական ձեռնարկում, կարելի չէ հաջողությամբ լուծել այն դեպքում միայն, յեթե մենք բոլորս և առաջին հերթին հարվածային կոլտնտեսականներն, ակտիվ մասնակցություն ունենան ապահովագրական աշխատանքին: Իլլսավոր խնդիրը՝ ապահովագրված գույքի հանդեպ անտնտեսավար վերաբերմունք ցույց տալու դեմ անողոք պայքար մղելն է հանդիսանում: Իրա համար անհրաժեշտ է, վոր հարվածային-կոլտնտեսականներն ամբողջեն կոլտնտեսություններում անազանգող պոստերը և նշանակեն այնտեղ կոլտնտեսային կարգերին ամենից նվիրված մարդկանց: Ապահովագրական պոստերը պետք է շարունակաբար հսկեն կոլտնտեսային գույքի ճիշտ պահպանության, խնամքի և ոգտագործման վրա, մերկացնեն դատակարգային թշնամու, վնասարարի ամեն տեսակի մախինացիաները, վոր ձգտում են հասարակական գույքը վատնելու և փչացնելու միջոցով խախտել կոլտնտեսային կարգերը: Անազանգող պոստերն իրենց աշխատանքով, խնայողական վերաբերմունքով դեպի սոցիալիստական գույքը, պետք է որինակ ծառայեն մնացած բոլոր կոլտնտեսականներին: Նրանց պետք է առաջավոր դիրքերը դրավեն ապահովագրության կազմակերպչական-մասսայական աշխատանքներում, լայնորեն ոգտագործելով այդ նպատակի համար կոլտնտեսության պատի թերթը, շրջանային մամուլը, կոլտնտեսականների ընդհանուր ժողովները: Նկատված թերությունների մասին, նրանք պետք է անազանգեն, տեղեկացնելով նաև ապահովագրական ապարատին:

Ապահովագրական անազանգող պոստերը, կոլտնտեսական ակտիվիստները, ինչպես նաև գյուղի հասարակական-մասնագետները, գյուղատնտեսները, անասնաբուժները, հրդեհային աշխատողները, պետք է ողնեն ձշտորեն կիրառելու կյանքում պետական ապահովագրության վերաբերյալ որենքները, հսկեն, վորպեսզի ճիշտ հասկացվեն ապահովագրական արտոնությունները, թույլ չտան խեղաթյուրումներ, հսկեն, վորպեսզի ժամանակին և ճիշտ ձևակերպվեն ապահովագրական վնասների վճարումները բոլոր տեսակի ապահովագրությունների գծով, անցկացնեն գույքի կամավոր ապահովագրություն, ինչպես նաև աշխատավորների կողմից ապահովագրություն:

Իրանով իսկ շատ կարճ ժամանակամիջոցում պետական

ապահովագրութիւնը մենք կդարձնենք մի խսկակա՞ն լծակ կորտնտեսութիւնները ամբողջապէս և սոցիալիստական սեփականութեան պաշտպանութեան համար:

Ուժեղացնենք հեղափոխական զգոնութիւնը մեր աշխատանքի այն բնագավառում, անշեղորեն կատարելով կուսակցութեան և կառավարութեան ցուցմունքները պետական ապահովագրութեան մասին, անողոք պայքար մղենք կուլակային անարդէների, պետութեան խարելու և կորտնտեսութիւնները խախտելու համար ապահովագրութիւնն ոգտագործելու յուրաքանչյուր փորձի դեմ:

3.

ՊԱՐՏԱԳԻՐ ԿՈՊԱՐԱՅԻՆ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Պարտադիր կոպարային ապահովագրութիւնը նպատակ ունի ավելի ևս կազմակերպչորեն-տնտեսականորեն ամրացնելու կորտնտեսութիւնները, բարձրացնելու անասնաբուժութիւնը, ավելացնելու բերքավութիւնը, կանխելու և պայքարելու հրդեհների, հեղեղումների և անասունների անկման դեմ ու պաշտպանելու սոցիալիստական սեփականութիւնը: Թորհրդային ապահովագրութիւնն աջակցում է այն բանին, վորպեսզի բոլոր կորտնտեսութիւններն ավելի ևս ամրանան, իսկ կորտնտեսականները դառնան ունեւոր:

ԻՆՉՊԻՍԻ ԳՈՒՅՔ Ե ԱՊԱՀՈՎԱԳՐՎՈՒՄ ԿՈՒՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ՅԵՎ ԻՆՉՊԻՍԻ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՆ ՍԱՀՄԱՆՎԱԾ ԿՈՒՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՅԵՎ ԿՈՒՏՆՏԵՍՈՎԱՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Պարտադիր կոպարային ապահովագրութեան վերաբերյալ որենքը կորտնտեսութիւններին և կորտնտեսականներին ավելի խոշոր արտոնութիւններ և վերապահում մենատնտեսների համեմատութեամբ:

ՎՄենք պետք է այնպես կիրառենք մեր քաղաքականութիւնը, և այնպես գնենք մեր քաղաքականութիւնը, ինչպես այդ նախատեսված է բոլոր կուսակցական և խորհրդային որենքներում, վորպեսզի կորտնտեսականը բոլոր տեսակետներին արտոնյալ լինի մենատնտեսների հանդեպ (Կիրով):

ԻՆՉՊԻՍԻ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ Ե ՏԱԼԻՍ ՊԱՐՏԱԳԻՐ ԿՈՊԱՐԱՅԻՆ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՈՐԵՆՔԸ ԿՈՒՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ՀՍԻՀ-ՈՒՄ

Առաջին՝ ապահովագրական գումարները (ապահովագրութեան նորմա) կորտնտեսութիւնները գույքի ապահովագրութեան համար ավելի բարձր են քան մենատնտեսների գույքի համար սահմանված գումարները: Այսպես, որինակ, խաղողի այգիները կորտնտեսութիւններում ապահովագրվում են 1475 ուրբ. հեկտարը, իսկ մենատնտեսների մոտ՝ 875 ուրբ.: Ձին կորտնտեսութիւններում կայուն նորմայով ապահովագրվում է 160 ուրբ. գումարով, իսկ մենատնտեսների մոտ՝ 140 ուրբ.: Այսպիսով՝ ուրբնի, յեթե խաղողի այգու բերքն ամբողջովին փչանում է կարկառից, ապա կորտնտեսութիւնն ստանում է Պետապից 1475 ուրբ., իսկ մենատնտեսը 875 ուրբ.: Կորտնտեսութեան ձին ընկնելու զեպքում նա ստանում է 160 ուրբ., իսկ մենատնտեսը 140 ուրբի: Բացի այդ, կորտնտեսութիւններին կամավոր ապահովագրութեան գծով ավելի լայն իրավունքներ է տրվում, քան աշխատավոր մենատնտեսութիւններին:

Յեկերոդ՝ տարիքային սրտային բոլոր ճեպակի ապահովագրութեան վերաբերմամբ կայսնեստրյունների համար անհամեմատ ավելի ցածր են, քան մենատնտեսների համար:

Այսպես որինակ, խաղողի այգիները ապահովագրութեան գծով կորտնտեսութեան համար զրույք սահմանված է 5 ուրբ., մենատնտեսութեան համար 8 ու 20 կ., իսկ կորտնտեսութեան համար 5 ու 40 կ.: Ձիերի ապահովագրութեան գծով յուրաքանչյուր 100 ուրբուց կորտնտեսութիւնը վճարում է տարեկան 4 ու 90 կոպ., կորտնտեսականը 7 ու 60 կոպ., իսկ մենատնտեսը 9 ու 90 կոպ.:

Յերոդի՝ կայսնեստրյուններում ապահովագրվում են մի տարբայնային որբեկներ, վորտեմ կայսնեստրյունների յեվ մենատնտեսների մոտ ապահովագրվում յեկերպա չեն:

Որինակ, կորտնտեսութիւններում գյուղական վայրերում պարտադիր կարգով ապահովագրվում են զանազան տեսակի շենքեր, արդյունարեբական ձեռնարկութիւններ, գյուղատնտեսական ինվենտար, հովք, ագրանքներ, խոտ, ծղոտ, վոչխարներ, այծեր, խոզեր, իսկ կորտնտեսականների և մենատնտեսների մոտ այդ գույքը պարտադիր կարգով չէ ապահովագրվում:

Չորերոդ՝ կայսնեստրյուններին ապահովագրական վճարումների գծով ավելի խոտոր տրստրյուններ յեվ զեղչե են տրվում, քան աշխատավոր մենատնտեսութեանը: Որինակ, կորտնտեսութեանը զեղչ է տրվում ազգացեղ անասունների, անասնաբուժական

ապրանքային ֆերմաներում գտնվող անասունների, ինչպես նաև անասնաբուժություն և հակահրդեհային բնագավառում ունեցած լավագույն վորակական ցուցանիշների համար: Այդ գեղջերը չեն ստանում մենատնտեսների տնտեսությունները:

Ան այտանդից յուրաքանչյուր կոլտնտեսական կարող և պարզորոշ համոզվել, վոր այն խոշոր արտոնությունները, վոր տալիս և խորհրդային իշխանությունը կոլտնտեսականներին նպատակ ունեն ամրացնելու կոլտնտեսային կարգերն ու բարձրացնելու կոլտնտեսականների բարեկեցությունը:

### ԻՆՉՊԻՍԻ ԳՈՒՅՔ ՅԵՎ ԻՆՉՊԵՍ Ե ԱՊԱՀՈՎԱԳՐՎՈՒՄ ԿՈՒՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ՊԱՐՏԱԳԻՐ ԿՈՊՈՐԱՅԻՆ ԿԱՐԳՈՎ

Առաջին՝ պարտադիր կոպարային ապահովագրության վերաբերյալ որենքի համաձայն ՀՍԽՀ կոլտնտեսություններում և սկզբնական կոպերատիվներում ապահովագրվում են շենքերը, գյուղատնտեսական և արդյունաբերական ձեռնարկությունները սարքավորման հետ միասին, գյուղատնտեսական մեքենաները, ամեն տեսակի փոխադրական միջոցներ, ավտոմեքենաներ, սայլեր և այլն, ամբողջ ինվենտարը (գուլթաններ, ձիասարք, փոցի և այլն), գյուղատնտեսական արտադրանքը (սերմացու, հացահատիկ, ալյուր, ձողոտ, բանջարեղեն, խոտ, պտուղներ՝ յուղ, կաթ, ձու, մեղր, բուրդ և այլն), վարտեղ ել այդ արտադրանքը գտնվելիս լինի՝ դաշտում, այգում, կոլտնտեսային շուկայում, նույնիսկ սայլերի վրա: Հուժեքի և վառելիքի պաշարը, ապրանքները և նյութերն ինչպես սեփական արտադրության, նույնպես և կոլտնտեսության կողմից դրսից ձեռք բերված:

Այս ամբողջ գույքը կոլտնտեսություններում ապահովագրվում և հրդեհներից, հեղեղումներից, յերկրաշարժից, փրուզումներից, սուզումներից, փոթորիկից, մրրկից, տարափից, կարկտահարությունից և կաթսաների պայթումից, այլ կերպ սասած, այն բոլոր տարերային աղետներից, վորոնք կարող են վրաս պատճառել կոլտնտեսությանը:

Յերկրորդ՝ կոլտնտեսություններում ապահովագրվում են ձիերը, ուղտերը, շորիները, ավանակները մեկ տարեկանից, իսկ խոշոր յեղջուրավոր անասունները, վոչխարները, այծերը, և խոզերը՝ վեց ամսական հասակից: Բացի այդ, կոլտնտեսություններում բոլոր տեսակի աղնվացեղ անասուններն ապահովագրվում են վեց ամսական հասակից: Պետապը հատուցում և վրասներն այն դեպքերում, յերբ այդ անասունները ընկնում են

հիվանդություն, բնական մահացություն և գծբախտ պատահարի հետևանքով (կայծակահարվում են, գաղանների գոհ են դառնում և այլն) անասնաբուժի կարգադրությամբ մթերվում են համաճարակ հիվանդությունների վորոշելու կամ այդ հիվանդությունների առաջն առնելու համար: Վերջապես, յերբ անասունն ընկնում և դասակարգային վրեժխնդրության պատճառով:

Յերրորդ՝ կոլտնտեսություններում ապահովագրվում են հացահատիկային մշակույթների ամբողջ ցանքերը, բանջարանոցները, բոստանները, խաղողի և պտղատու այգիները, կարտոֆիլը, չալթուկը, ծխախոտը, վուշը և այլ գյուղատնտեսական մշակույթներ: Այդ մշակույթներն ապահովագրվում են կարկտահարությունից, տարափից, փոթորիկներից, ցրտահարումից, թրջումից, փառումից, հեղեղումից և կրակից: Իսկ բամբակի և ծխախոտի ցանքերն ապահովագրվում են բոլոր տարերային աղետներից, վրասատուներից և բույսերի հիվանդություններից: Վուշի և կանեփի ցանքերը, բացի այդ, ապահովագրվում են նաև յերաշափց: Գյուղատնտեսական մշակույթների վերջին չորս տեսակներն ապահովագրվում են բոլոր տարերային աղետներից, քանի վոր այդ մշակույթների զարգացումը խոշոր նշանակություն ունի մեր արդյունաբերության հումքի պահանջը բավարարելու համար:

### ԻՆՉՊԻՍԻ ԳՈՒՅՔ ԿՈՒՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ԶԻ ԱՊԱՀՈՎԱԳՐՎՈՒՄ

ՀՍԽՀ կոլտնտեսություններում չեն ապահովագրվում.— Առաջին՝ խաբխուր, քանդված շենքերը, գետնափորներն ու քանդվելիք շինությունները:

Յերկրորդ՝ ապահովագրական հասակ չունեցող անասունները՝ ձիերը, ուղտերը, ավանակները, շորիները, մինչև մեկ տարեկան, իսկ խոշոր յեղջուրավոր անասունները, վոչխարները, այծերն ու խոզերը մինչև վեց ամսական:

Յերրորդ՝ Յենթաշերտային բույսերը ցանված տարում և կանաչ պարարտացման համար ցանված բույսերը:

### ԻՆՉՊԻՍԻ ԳՈՒՄԱՐՆԵՐՈՎ ԵՆ ՀԱՏՈՒՑՎՈՒՄ ԿՈՒՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՎՆԱՄՆԵՐԸ

Շենքերը, ձեռնարկությունները, ինվենտարը, արտադրանքը, հումքը, պաշարը, ապրանքները, նյութերը, ինչպես նաև փոխադրական միջոցները և այլ գույք ապահովագրվում են կրակից:

կամ մյուս տարերային աղետներից իրենց լրիվ արժեքով ըստ ին-  
վենտար կամ հաշվեկշռային գրանցումների: Այսպիսով, գույքը  
կրակից կամ ուրիշ տարերային աղետներից փչանալու դեպքում կու-  
տանտեսություններն ստանում են Պետապից այդ գույքի լրիվ ար-  
ժեքն ըստ ինվենտարի գրանցման:

Մակայն, շատ հաճախ կոլտնտեսությունների ինվենտար  
մատյաններում գույքի արժեքը նրա իսկական արժեքից շատ  
ավելի ցածր է նշված լինում: Որինակ, կոլտնտեսության ազացի  
արժեքը մատյանում գրված է լինում: 1500 ուսուլի, այնինչ  
ճրա իսկական արժեքն է 8000 ուսուլի: Յեվ իհարկէ, հրդեհ պա-  
տահերու դեպքում կոլտնտեսությունը կստանա Պետապից 1500 ա.  
միայն, քանի վոր այդ գումարով է գույքն ապահովագրված:

Կարելի չէ արդյոք այդ 1500 ուսուլով նույնաման նոր  
աղաց կառուցել: Պարզ է, վոր վոչ Հետևապես, կոլտնտեսու-  
թյունները պետք է հոգան այն մասին, վոր իրենց շենքերը,  
ինվենտարը, փոխադրական միջոցներն ու արդյունաբերական  
ձեռնարկությունները ճիշտ գնահատված լինեն, վորպեսզի հըր-  
դեհի կամ այլ տարերային աղետներից փչանալու դեպքում  
գրանց փոխարենը կարելի լինի նորերը կառուցել:

Կոլտնտեսային ցանքերը կարկտահարումից, տարափից, հե-  
ղեղումից, թրշումից, ցրտահարումից, փտումից և փոթորկից  
փչանալու կամ վնասվելու դեպքում Պետապն ամբողջ ՀՄՆՀ-ում  
վճարում է յուրաքանչյուր մշակույթի համար որնըսով սահման-  
ված միանման նորմայով, այն է՝ հացահատիկային մշակույթինե-  
ների համար (ցորեն, գարի, յեգիպտացորեն և այլն)՝ 80 ուսու.  
մեկ հեկտարին, արևածաղկի և ցանովի խոտերի՝ 175 ա., սիլոսային  
մշակույթների՝ 75 ա., բանջարանոցի՝ 500 ա., բոստանների՝ 600 ա.,  
պտղատու այգիների՝ 800 ուսու., խաղողի այգիների՝ 1475 ուսու.,  
կարտոֆիլի և արմատապտուղների՝ 200 ա., վուշի՝ 40 ուսու. և  
ծխախոտի՝ 1200 ուսու.:

Գորիսի, Իջևիանի, Միկոյանի, Շամշադինի, Ղափանի և  
Ալլահվերդու շրջաններում խաղողի այգիների համար ապահովա-  
դրական նորման ավելի ցածր է, այն է՝ 1000 ուսու. մեկ հեկ-  
տարին: Յեվ դա ճիշտ է, քանի վոր խաղողի բերքն այդ շրջան-  
ներում սովորաբար անհամեմատ ավելի քիչ է լինում, քան  
մյուս շրջաններում:

Գյուղատնտեսական հասուկ յեվ սելանիական մետակույրների  
համար, վորք ապահովագրվում են բոլոր տարերային աղետներից. —  
որենքում առանձին նորմաներ են նախատեսված, այն է՝ ծխա-

խոտի համար 1200 ուսու., իսկ բամբակի համար 150 ուսու. մեկ  
հեկտարին:

• Ինքնին պարզ է, վոր գյուղատնտեսական այս կամ այն  
մշակույթը փչանալու կամ վնասվելու դեպքում, վնասներ կու-  
տանտեսությանը վճարում են նայած այն բանին, թե քանի տո-  
կոսով է տուժել այդ մշակույթը, այլ վոչ լրիվ արժեքով: Որինակ՝  
յեթե ծխախոտի մեկ հեկտարը կարկտահարվել է 50%-ով, ապա  
կոլտնտեսությունը կստանա Պետապից 600 ա., իսկ յեթե վնասվել է  
դիցուք, 90%-ով, ապա կոլտնտեսությունը կստանա ապահովագրա-  
կան գումարի 90%-ն, այսինքն, 1080 ուսուլի: Մի ուրիշ որինակ,  
յեթե կոլտնտեսության խաղողի այգիները տուժում են կարկը-  
տահարումից ընդամենը բերքի 10%-ով, ապա կոլտնտեսու-  
թյունը ստանում է Պետապից 147 ուսու. 50 հոպ., մեկ հեկտա-  
րին, իսկ յեթե նույն այգին կարկտահարվում 100%-ով, ապա  
կոլտնտեսությունն ստանում է արդեն 1475 ուսուլի:

### ՎՈՐՔՄՆ Ե ՎՃԱՐՈՒՄ ՊԵՏԱՊՈՐ ԿՈՒՏՆԵՍՈՒԹՅԱՆ ԱՆՍՈՒՆԵՐԻ ԱՆԿՄԱՆ ԳԵՊՔՈՒՄ

Յեթե կոլտնտեսության մեջ ընկնում են վեց ամսականից  
մինչև մեկ տարեկան հասակ ունեցող խոզոր յեղջյուրավոր անա-  
սուններ, ապա կոլտնտեսությունն ստանում է 75 ուսու., մեկ  
տարեկան և ավելի բարձր հասակ ունեցողների համար—145 ա.,  
իսկ գոմեշների և մատակների համար 185 ուսու.: Մեկից մինչև  
յերկու տարեկան հասակ ունեցող ձիերի և ուղտերի համար 75  
ուսու., 2 տարեկան և ավելի բարձր՝ 160 ուսու., մեկից մինչև  
յերկու տարեկան հասակ ունեցող ավանակների համար 30 ուսու.,  
յերկու տարեկան և ավելի բարձր՝ 65 ուսու., վեց ամսական և  
ավելի բարձր հասակ ունեցող վոշխարների և այծերի համար 50  
ուսու., վեց ամսական և ավելի բարձր հասակ ունեցող խոզերի  
համար 75 ուսու.: Կոլտնտեսության տղնվացեղ անասուններն  
այն է՝ խոզոր յեղջյուրավոր անասունները մեկ տարեկանից  
ավելի բարձր հասակում, իսկ ձիերը յերկու տարեկանից ավելի  
բարձր հասակում, ապահովագրվում են իրենց լրիվ արժե-  
քով անպահովագրական հասուկ գնահատմամբ ու անկման դեպքում  
կոլտնտեսությունն ստանում է այդ ազնվացեղ անասունների լրիվ  
արժեքը: Ազնվացեղ անասուններին գնահատում է շրջանային  
ապահովագրական տեսուչն անասնաբուժի (անասնաբուժակի,  
ոտտիսնիկի կամ գյուղատնտեսի) մասնակցութեամբ: Պետք է

նկատի ունենալ, վոր ազնվացեղ համարվում են այն անասունները, վորոնք հատուկ հաշվառման են յենթարկված շրջնորթաժիններում և ցեղական քարտեր ունեն:

**ՎՈՐ ՉԱՓՈՎ Ե ԿՈՒՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՏՈՒՅՈՒՄ ՍՏԱՆՈՒՄ ՊԵՏԱՊԻՑ, ՅԵԹԵ ԳՈՒՅԲԸ ՓԶԱՅԵԼ Ե ԴԱՍԱԿԱՐԳԱՅԻՆ ԹՇՆԱՄՈՒ ՎՐԵԺԽՆԴՐՈՒԹՅԱՆ ՀԵՏԵՎԱՆՔՈՎ**

• Յեթե պարզվում է, վոր գույքը փշացել է կամ վնասվել է դասակարգային թշնամու ձևերով (հրկիցում, անասունների վոչնչացում և այլն), ապա նման վնասները Պետապը հատուցում է գույքի լրիվ արժեքով: Որինակ, յեթե կոլտնտեսության մեջ դասակարգային թշնամու վրեժխնդրության հետևանքով մի կով և ընկել վորի արժեքն է 1000 ռուբլի, իսկ այդ կովը պարտադիր կոպարային ապահովագրության գծով ընդամենը 145 ռուբ. է ապահովագրված, ապա կոլտնտեսության տրվում է կովի լրիվ արժեքը, այսինքն 1000 ռուբլի:

**ԻՆՉՊԻՄԻ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՆ ՍՏԱՆՈՒՄ ԿՈՒՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՊԵՏԱՊԻՑ ԿԵՆԴԱՆԱՐՈՒԾՈՒԹՅԱՆ ՅԵՎ ՀԱԿԱՀՐԻԵՀԱՅԻՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԸ ԼԱՎ ՀԻՄՔԵՐԻ ՎՐԱ ԳՆԵԼՈՒ ԱՍԱՐ**

Կոլտնտեսային անասնաբուժության զարգացման համար որենքով խոշոր արտոնություններ են նախատեսված: Այն առաջավոր կոլտնտեսությունները, վորոնք հաջողությամբ կատարում են անասնաբուժության զարգացման պետական պլանը և անասունների հոտի պահպանման և զարգացման բնագավառում լավագույն ցուցանիշներ ունեն՝ անասունների թվի ավելացում մտադրանքի աճեցման հաշվին, կանոնավոր կերակրում ու խնամք և այլն ապահովագրական վճարումներից զեղչ են ստանում մինչև 25%:

Այդ զեղչն ապահովագրական վճարումներից տրվում է ինչպես բոլոր անասունների համար, նույնպես և անասունների առանձին տեղակների համար: Այսպես, որինակ, Շահումյանի անվան կոլտնտեսությունն ունի 100 գլուխ վոչ ազնվացեղ խոշոր յեղջյուրավոր անասուն: Առջոր յեղջյուրավոր անասունները գտնվում են ապրանքային ֆերմայում և լավ են պահպանվում: Այդ անասունների համար կոլտնտեսությունը զեղչ է ստանում:

Նույն կոլտնտեսությունն ունի 20 գլուխ ձի, վորոնք անբավարար են պահպանվում, ուստի կոլտնտեսությունը ձիերի համար վոչ մի զեղչ չի ստանում:

Բացի այդ, յեթե անասունն ապրանքային ֆերմայում է գտնվում, ապա անասունների յուրաքանչյուր տեսակի համար սահմանված ապահովագրական վճարումների գումարից կոլտնտեսությունը զեղչ է տրվում 20%-ի չափով:

Իսկ յեթե ապրանքային ֆերմայում կան ազնվացեղ անասուններ, նման անասունի համար սահմանված ապահովագրական վճարումների գումարից զեղչ է տրվում ևս 20%:

Այսպիսով, որին, յեթե ազնվացեղ անասունը գտնվում է ապրանքային ֆերմայում, ապա զեղչ տրվում է 40% և որին պակելի պահպանության համար 25%, ընդամենը 65%: Իսկ յեթե ազնվացեղ անասունն ապրանքային ֆերմայում չի գտնվում և անասուններն որինակելի վիճակում են, ապա կոլտնտեսությունը զեղչ է ստանում 45%-ի չափով:

Ենքերի, գյուղատնտեսական և արդյունաբերական ձեռնարկությունների, փոխադրական մեխյաների, ինվենտարի և այլրի ապահովագրության գծով, վոր հրդեհից և ուրիշ ապրանքային աղետներից են ապահովագրվում, այն կոլտնտեսությունները, վորոնք ունեն լավ կազմակերպված հակահրդեհային պաշտպանություն, ապահովագրական վճարումներից զեղչ են ստանում մինչև 50%: Նման արտոնություն տրվում է այն կոլտնտեսություններին, վորոնք ունեն լավ հրդեհ խուճը, լավ են պահպանում հրդեհ սարքավորումն ու մեքենաները, կազմակերպել են գույքի մշտական պահպանման գործը, ինչպես նաև այն կոլտնտեսություններին, վորոնք իրենց շենքերը կառուցում են հրադիմացիուն նյութերից: Ձեղչի չափը յուրաքանչյուր կոլտնտեսության համար առանձին վորոշում է նույնպես շրջանային ապահովագրական հանձնաժողովը: Յեթե կոլտնտեսության մեջ հակահրդեհային պաշտպանությունը լավ է դրված, ապա նա 50% զեղչ է ստանում իսկ յեթե հրդեհային պաշտպանության բնագավառում կան առանձին ցուցանիշներ, որինակ, լավ է կազմակերպված հրդեհային խուճը, բայց չկա ջուր և այլն, ապա զեղչ ավելի քիչ է տրվում, որինակ, 10, 20 կամ 25%:

1009  
3999  
4017





**ԻՆՉՊԻՍԻ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՆ ՏՐՎՈՒՄ ԱՅՆ ԿՈԼՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ, ՎՈՐՈՆՑ ԿՍՉՄԻՄԵՁ ԿԱՆ ԽՈՐՀՐԵԱՅԻՆ ՄԻՈՒԹՅԱՆ ՀԵՐՈՍՆԵՐ, ՉԻՆՎՈՐԱԿԱՆՆԵՐ, ՇԲԱՆՇԱՆՆԵՐՈՎ ՊԱՐԳԵՎԱՏՐՎԱԾՆԵՐ**

Պարտադիր կողարային ապահովագրության վերաբերյալ որենքույ սահմանված և այնպիսի կարգ, վորով տվյալ կողանտեսության համար հաշվարկված ապահովագրական վճարումների գումարից հանվում և 50% - ն այն գումարի, վորն ընկնում և կողանտեսությունների կազմի մեջ մտնող խորհրդային Միության հերոսներին, ԽՍՀՄ շքանշաններով պարգևատրվածներին, աշխատանքի հերոսներին, զինվորականներին, գյուղական այն ակտիվիստներին ընտանիքներին, վորոնք գյուղի սոցիալիստական վերակառուցման և սոցիալիստական սեփականության պաշտպանության համար պայքարելիս կուլակային վրեժխնդրության զոհ են դարձել, ինչպես նաև իրենց պաշտոնական պարտավորությունները կատարելու ժամանակ սպանված անտառային աշխատողների ընտանիքներին:

Այսպես, որինակ, կողանտեսության համար սահմանված և 2400 ուրբ. ապահովագրական վճարում: Կողանտեսության անդամներին թիֆն և, բացի մանկահասակներից, 120 հոգի: Ուրբնի, յուրաքանչյուր անդամին ընկնում և 20 ուրբի: Կողանտեսության մեջ կան 4 կարմիր բանակային, 1 խորհրդային Միության հերոս, անտառային աշխատողի ընտանիքի 2 անդամ: Այդ 7 անդամին ընկնում և 140 ուրբ. ապահովագրական վճարում: Իսկ արտոնություն տրվում և 50% , հետևապես ապահովագրական վճարումների ընդհանուր գումարից տվյալ դեպքում պետք և հանել 70 ուրբի:

**ԻՆՉՊԻՍԻ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՆ ՏՐՎՈՒՄ ԱՅՆ ԿՈԼՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ, ՎՈՐՈՆՑ ՏՈՒԺԵԼ ԵՆ ՏԱՐԵՄԱՅԻՆ ԱՂԵՏՆԵՐԻՑ**

Բացի վերը հիշատակված արտոնություններից, արտոնություններ տրվում են նաև այն կողանտեսություններին, վորոնք տուժել են այնպիսի տարերային աղետներից, վորոնցից Պետապը չի ապահովագրում: Որինակ, հայտնի յե, վոր հացահատիկային մշակույթները չեն ապահովագրվում յերաշտից: Յենթադրենք, վոր կողանտեսության 100 հեկ. գարնան և աշնան ցան-

ները փչացել են յերաշտից և քանի վոր այդ ցանքերը յերաշտից չեն ապահովագրվում, ուստի կողանտեսությունը Պետապից հատուցում չի ստանում իր կրած ֆրանսների համար: Նման դեպքերում կողանտեսության արտոնություն տրվում և ապահովագրական վճարումներից վորոշ տոկոս զեղչելու ձևով: Չեղչերի չափը շրջանային ապահովագրական հանձնաժողովը վորոշում և նայած կողանտեսության կրած ֆրանսին, բայց վոր չափի քան այդ կողանտեսություններից հասանելիք ապահովագրական վճարումների ընդհանուր գումարի 90% - ր:

Որինակ՝ յենթադրենք, վոր Նոր-Բայադետի շրջանի Նորագույ գյուղի կողանտեսության ցորենի ցանքերը տուժել են յերաշտից: Շրջանային ապահովագրական հանձնաժողովը վորոշել և տալ կողանտեսության արտոնություն 80% - ով: Այդ կողանտեսության համար ապահովագրական վճարումներ վորոշված են ընամենը 2000 ուրբ.: Այս դեպքում արտոնությունը կկազմի 1600 ուրբ., ուրբնի, կողանտեսությունը Պետապին 2000 ուրբ. և փոխարեն վճարում և միայն 400 ուրբ.:

Արտոնություն տալու համար վորպես հիմք ձառայում են բերքատվության հանձնաժողովների և հողային որդանների յեղբակացությունները: Կենդանաբուծության և հակահրդեհային պաշտպանության բնագավառում լավ վորակական ցուցանիշներ ունենալու համար արտոնություն շրջանային ապահովագրական հանձնաժողովը տալիս և այն ժամանակ, յերբ այդ ուսյն հանձնաժողովի անդամներն ապահովագրական ակտիվի մասնակցությունը հետագոտել են ապահովագրված գույքի գրությունը:

Չնայած այն բանին, վոր լավագույն կողանտեսությունների մեծ մասն այնպիսի խոշոր արտոնություն և ստանում, այնուամենայնիվ, դրանց գույքն ապահովագրվում և արտոնություններ՝ չունեցող կողանտեսությունների հետ համահավասար հիմունքներով: Այն դեպքերում, յերբ տեղի յե ունենում հրդեհ, կարկանդակ և այլն, Պետապն արտոնություն ունեցող կողանտեսությանն ապահովագրական վարձատրություն տալիս և նույն չափով, ինչ վոր այն տնտեսությանը, վորին արտոնություն և զեղչ չի հատկացված:

**ԻՆՉՊԵՍ Ե ՎՈՐՈՇՎՈՒՄ ԿՈՒՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԱՊՈՆՈՎԱԳՐԱԳՈՒՆ ՎՃԱՐՈՒՄՆԵՐԻ ԶԱՓԸ**

Վորպեսզի բոլորովին պարզ լինի այդ ցույց տանք որինակով:

Յենթադրենք, վոր Լամարվի շքանի Յուվա գյուղի կուսնաստեթյունն ունի պարտադիր կողարային կարգով ապահովագրվելիք հետեյալ գույքը:

**1. ՇԵՆՔԵՐ, ԻՆՎԵՆՏԱՐ, ԱՐՏԱԴՐԱՆԲ**

- Շենքեր և արդունարերական ձեռնարկություններ արժողությամբ ըստ ինվենտար մատյանների . . . . . 60000 ու.
- Ինվենտար, գյուղատնտեսական մեքենաներ և փոխադրական միջոցներ արժողությամբ . . . . . 40000 ու.
- Արդունարերական արտադրանք, հումք, պաշար, նյութեր, ապրանքներ . . . . . 10000 ու.
- Մարգագետնային և դաշտային արտադրանք . . . . . 80000 ու.

**2. ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՆՍՈՒՆՆԵՐ**

Ձիեր վոչ ազնվացեղ 2 տարեկան և ավելի բարձր հասակի—40 գլուխ, մեկից մինչև 2 տարեկան—10 գլուխ:  
 Սոչոք յեղջուրավոր անասուններ վոչ ազնվացեղ մեկ տարեկան և ավելի բարձր հասակի ապրանքային ֆիրմայից դուրս—60 գլուխ, ապրանքային ֆերմայում—40 գլուխ: Ազնվացեղ խոզոր յեղջուրավոր անասուններ 2 գլուխ յերեք տարեկան հասակի, ապրանքային ֆերմայում—2000 ուրբու ընդհանուր արժողությամբ: Վոչ ազնվացեղ անասուններ ապրանքային ֆերմայում, վեց ամսականից մինչև մեկ տարեկան—10 գլուխ:

**3. ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՄՇԱԿՈՒՅԹՆԵՐ**

Մաղողի այգի, վորն ապահովագրվում և կարկտահարումից, տարափից, փոթորիկներից, ցրտահարումից և հեղեղումից . . . . . 50 հեկտար  
 Բամբակի ցանքեր, վորոնք ապահովագրվում են բոլոր տեսակի տարերային աղետներից . . . . . 400 հեկտար  
 Ցորենի ցանքեր . . . . . 100 »  
 ՀՍԽՀ կողանտեսությունների համար սահմանված են ապահովագրական տարիքների հետեյալ դրույքները և վորի հիման վրա հոլտնտեսությունը պետք և վճարի

**ԳՈՒՅՔԻ ԱՆՈՒՆԸ**

	Ապահովագրական գումարի կամ գույքի արժեքը	Ապահովագրական գումարի 100 ու.		Ձեռքի և արտադր. %		Ապահովագրական գումարի վճարումը	
		Բուր.	Կ.	Բուր.	Կ.	Բուր.	Կ.
1. Շենքեր, արգ. ձեռն. . . . .	60000	—	50	—	—	300	—
2. Ինվենտար, գյուղմեքեն. և տրանսպորտ. . . . .	40000	—	30	—	—	120	—
3. Մարգագետ. և դաշտ. արտադր.	80000	Ձրիարար և ապահովագրվում					
4. Արդուն., արտադր. ապրանքներ և նյութեր . . . . .	10000	—	50	—	—	50	—

Ընդամենը կրակից ապահովագրելու գծով . . . . . 470 ու.

5. Վոչ ազնվ. ձիեր 2 տար. և ավելի բարձր 40 գլուխ ապր. ֆերմայից դուրս . . . . .	6400	4	90	—	—	313	60
6. Վոչ ազնվ. ձիեր 1-ից 2 տարեկան 10 գլուխ . . . . .	750	4	90	Ձրիարար և ապահովագր.			
7. Վոչ ազնվ. խոչ. յեղջ. անաս. 1 տ. և ավելի հասակից բարձր 60 գլուխ . . . . .	8700	2	35	—	—	204	45
8. Նույնն ապրանք. ֆերմայում 40 գլուխ . . . . .	5800	2	35	20	—	109	04
9. Սոչ. յեղջ. անասուն. ապր. ֆերմայում 3 տարեկան 2 գլուխ . . . . .	2000	2	35	20	—	28	20
10. Սոչ. յեղջ. անասուն. 6 ամսական մինչ 1 տարեկան 10 գլուխ . . . . .	750	2	35	Ձրիար. ապահով.			

Ընդամենը գյուղատնտ. անասունների ապահով. գծով . . . . .

1. Սաղողի այգի 50 հեկ. . . . .	73750	7	10	—	—	5236	25
2. Բամբակի ցանքեր 400 հեկ. . . . .	60000	2	30	—	—	1380	—
3. Ցորենի ցանք 100 հեկ. . . . .	8000	4	50	—	—	360	—

Ընդամենը գյուղատնտ. մշակ. ապահով. վճարումներ . . . . . 6976 25  
 Ընդամենը կողանտ. բոլոր արջեկտ. ապահ. վճար. . . . . 8101 54

Այնուհետև, հաշվենք, թե կոլտնտեսութունը վորքան արտոնություններ կատանա:

Յենթադրենք, վոր հակահրդեհային գործը լավ կազմակերպելու համար ապահովագրական հանձնաժողովը կոլտնտեսությանը 30%-ային դեղչ է հասկացրել կրակից ապահովագրվող շենքերի և այլ գույքի համար կատարվող վճարումներին, իսկ Ֆերմայում գտնվող և Ֆերմայից դուրս յեղած անասունների խնամքի և պահպանման բնագավառում ունեցած ցուցանիշների համար դեղչ 20%-ով: Ձեզչերի գումարը կկազմի՝ շենքերի և այլ գույքի ապահովագրության գծով 30%-ը 470 ուսուցից—141 ուսուցի, անասուններին անկուսից ապահովագրելու գծով 20%-ը 655 ուսուցի և 29 կոպեկ—131 ուսուցի 06 կոպեկ—ընդամենը 272 ուսուցի 06 կ.: Այսպիսով, կոլտնտեսության ապահովագրական վճարումների գումարը, հանելով այդ դեղչերը, կկազմի 7829 ուսուցի 48 կոպեկ:

Բացի այդ կոլտնտեսությունն իրավունք ունի դեղչ ստանալու իր կազմի մեջ մտնող կարմիր բանակային տնտեսությունների համար: Յենթադրենք, վոր Յուզա գյուղի կոլտնտեսությունն ունի 800 անգամ, չհաշվելով փոքրահասակներին: Այսպիսով, կոլտնտեսության յուրաքանչյուր անգամին ընկնում է 10 ա. 12 կ.: Կոլտնտեսութան մեջ կան 50 հոգի արտոնություններ ստանալու իրավունք ունեցողներ, վորոնց վրա ընկնում է 506 ա., իսկ քանի վոր արտոնությունը տրվում է 50%-ի չափով, հետևապես, տվյալ դեպքում ապահովագրական վճարումների 7829 ա. 48 կ. ընդհանուր գումարից պետք է հանել 253 ուսուցի և կոլտնտեսությունն իր գույքն ապահովագրելու համար պետք է վճարի 7576 ա. 48 կոպ., իսկ ապահովագրված գույքը փչանալու դեպքում Պեսապը պետք է վճարի կոլտնտեսությանը 356150 ա.:

### ԻՆՉՊԻՍԻ ԺԱՄԿԵՏՆԵՐՈՒՄ ՊԵՏՔ Ե ԿՈՒՏՆԵՍՈՒԹՅՈՒՆՆ ԼՊԱՆՈՎԱԳՐԱԿԱՆ ՎՃԱՐՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԻ

Վորպեսզի կոլտնտեսությունը հեշտությամբ կատարի ապահովագրական վճարումներն որենքը սահմանում է յերկու ժամկետ, սովորաբար հոկտեմբերի մեկը և դեկտեմբերի մեկը: Յենթև կոլտնտեսությունը ժամանակին չի մուծում իրենից պահանջվելիք վճարումները, ապա դրանք դառնում են ապառք ու գանձվում, ավելացնելով նաև տույժը՝ 0,1% յուրաքանչյուր ժամկետանց որվա համար: Ապահովագրական վճարումների ժամանա-

կին կատարելը խոշոր նշանակութուն ունի: Ժամանակին մուծված յուրաքանչյուր ուսուցի ոգնում է սոցիալիզմի հաղթական շինարարությանը:

Կոլտնտեսությունը վորպես խորհրդային իշխանության հենակետը դուրսդուր պետք է որինակ ծառայի կոլտնտեսականների և մենատնտեսների վողջ մասսայի համար պետության հանդեպ դրամական պարտավորությունները լրիվ կատարելու գործում:

### ԻՆՉՊԻՍԻ ԳՈՒՅՔ ՅԵՎ ԻՆՉՊԻՍԻ ԱՂԵՏՆԵՐԻՑ Ե ԼՊԱՆՈՎԱԳՐԱԿԱՆ ԿՈՒՏՆԵՍՈՒԿԱՆՆԵՐԻ ՅԵՎ ԱՇԽԱՏԱՎՈՐ ՄԵՆԱՏՆԵՍՆԵՐԻ ՄՈՏ

Պարտադիր կոպարային ապահովագրության վերաբերյալ որենքի համաձայն ՀՍԽՂ-ում ապահովագրվում է կոլտնտեսականների (տնտեսության վողջ հանրայնացված մասի վերաբերմամբ), աշխատավոր մենատնտեսների, բանվորների, ծառայողների, տնայնագործների և արհեստավորների հետևյալ գույքը՝ Յերեվանում, Լենինականում, Վաղարշապատում, Կիրովականում, Գրիշանում, Նոր-Բայազետում և Գորիսում բնակելի և վողջ բնակելի շենքերը, տնայնագործական-արհեստագործական արհեստանոցները (շենքերն ու սարքավորումը):

Այդ շենքերն ու արհեստանոցները, ինչպես և կոլտնտեսություններում, ապահովագրվում են հրդեհից, հեղեղումից, յերկրաշարժից, փրուզումներից, սողումներից, փթթորկից, մրրկից, սարսփից, կայծակահարումից և կաթսաների պայթումից:

Այն շենքերն ու արհեստանոցները, վորոնք պատկանում են կոլտնտեսականներին, աշխատավոր մենատնտեսներին, տնայնագործներին, արհեստավորներին, բանվորներին, ծառայողներին և այլ աշխատավորներին գյուղական վայրերում բուրգովին չեն ապահովագրվում:

Ապահովագրական վարձատրություն կոլտնտեսականներին, աշխատավոր, մենատնտեսներին, տնայնագործներին, արհեստավորներին, բանվորներին և ծառայողներին շենքերում և տնայնագործական-արհեստագործական արհեստանոցներում՝ իրենց սարքավորումով հրդեհվելուց և այլ տարերային աղետների յենթարկվելուց առաջացած վնասների համար վճարվում է գույքի լրիվ արժեքի չափով Պետապի գնահատմամբ:

## ԻՆՉՊԵՍ Ե ԳՆԱՀԱՏՈՒՄ ՊԵՏԱՊՆ ԱՅԳ ՇԵՆՔԵՐԸ

Պետապն այդ շենքերը գնահատում և ըստ այն իսկական արժեքի, վոր դրանք ունեն գնահատման պահին, հանելով շիջեցման տեղուր: Որինակ, կոլտնտեսականն ունի Գորխուս մի շենք, վորը բաղկացած է յերկու սենյակից և խոհանոցից: Շինանյութերի և բանվորական ուժի իսկական գներով այդ շենքն արժի 8000 ուրլի, բայց քանի վոր շենքը ներկայումս չի կառուցվել, այլ դիցուք 15 տարի սրանից առաջ է կառուցվել, ուստի այդ ժամանակամիջոցում շենքը հնացել է և այդքան չարժի: Գրահամար էլ հնանալու պատճառով վորոշ տեղոս հանվում է, որինակ, 30% 8000 ուրլուց, վորը կկազմի 2460 ուրլ: Այսպիսով, տան իսկական արժեքը կլինի վոչ թե 8000 ուրլի, այլ 5540 ուրլի: Ահա այս գումարով է ապահովագրվում սվյալ շենքը:

Նույն կարգով գնահատվում և ապահովագրվում են նաև մնացած աշխատավորների շենքերը:

Այսանդ պետք է նշել, վոր խորխուլ կամ կիսաքանդ շենքերը, ժամանակավոր, այսինքն մեկ տարուց ավելի պակաս ժամանակով կառուցված շենքերը, խորհրդային իշխանության որդանների կարգադրությամբ քանդվելիք շենքերը, ինչպես նաև անմարդարնակ և անպաշտպան շենքերը բոլորովին չեն ապահովագրվում:

Գյուղատնտեսական բույսերի ցանքերը, պտղատու և խաղողի այգիների բերքը աշխատավոր մենատնտեսություններում, ինչպես նաև տնամերձ հողամասերում յեղած ցանքերը, կոլտնտեսականների պտղատու և խաղողի այգիներն ապահովագրվում են կարկտից, տարափից, փոթորկից, ցրտահարումից, փտումից և հեղեղումից:

Բանջարանոցներն ու ըոստանները մենատնտեսություններում և կոլտնտեսականների մոտ ապահովագրվում են միայն կարկտահարումից, տարափից և փոթորկից, իսկ հեղեղումներից ցրտահարումից, փտումից և թրջումից չեն ապահովագրվում:

Բամբակի ցանքերն, ինչպես կոլտնտեսություններում, կոլտնտեսականների մոտ և աշխատավոր մենատնտեսություններում ապահովագրվում են բոլոր տարբերային աղետներից, վնասատուներից և բույսերի հիվանդություններից: Գյուղատնտեսական մշակույթների ցանքերը, պտղատու և խաղողի այգիների բերքն, ինչպես կոլտնտեսություններում, կոլտնտեսականների և

աշխատավոր մենատնտեսների մոտ ապահովագրվում են արենքով սահմանված կայուն նորմաներով: Գյուղատնտեսական բույսերի նորմաների չափը կոլտնտեսություններին համար սահմանված է մոտ 7—10% -ով ավելի բարձր, քան մենատնտեսների համար: Որինակ, բանջարանոցի մեկ հեկտարը կոլտնտեսականի մոտ ապահովագրվում է 450 ա. իսկ մենատնտեսի մոտ 400 ա., խաղողի այգու մեկ հեկտարը կոլտնտեսականի մոտ ապահովագրվում է 975 ուրլի իսկ մենատնտեսի մոտ 875 ուրլի:

Վորպեսզի յուրաքանչյուր կոլտնտեսական և մենատնտես կարողանա պարզ վորոշել թե ինչպիսի գումարով են ապահովագրված իր գյուղատնտեսական մշակույթները ստորև բերու մ ենք այդ նորմաները:

Գյուղատնտեսական մտակույթների ապահովագրական նորմաները, վոր սահմանված են ՀԱԽԷ-ի համար 1936 թ. կոպարային ապահովագրության վերաբերյալ որոշումով:

Գյուղատնտեսական մշակույթների անունը	Գյուղ. մշակույթ. նորմաների մեկ հեկտարից	
	Կոլտնտեսական. համար	Մենատնտես. համար
1. Հացահատ. մշակ. (ցորեն, դարձի և այլն) և սիլոս մշակ.	85	60
2. Արևածաղիկ և ցանովի խոտեր	150	120
3. Բանջարանոցներ	450	400
4. Բոստաններ	500	450
5. Պտղատու այգիներ	625	575
6. Խաղողի այգիներ	975	875
7. Կարտոֆիլ և արմատապտուղներ	150	130
8. Կապույտ	35	35
9. Չալթուկ	300	300
10. Շաքարի ճակնդեղ	200	150
11. Մ ի ս ի ո ս	900	900
12. Այլ մշակույթներ	150	130
13. Բամբակ	120	120

Չեաք և հիշել, վոր տնամերձ հողամասերում յեղած ցանքերը կոլտնտեսականների, աշխատավոր մենատնտեսների, բանվորների

րի և ծառայողները մոտ ապահովագրվում են այն դեպքերում միայն, յերբ այդ ցանձերի ընդհանուր տարածությունը 250 քառակուսի մետրից ավելի չե, իսկ յեթե դրանից ավելի պակաս է, ապա բոլորովին չեն ապահովագրվում և ֆրասներ առաջանալու դեպքում Պետապն ապահովագրական վարձատրություն չի վճարում: Գյուղատնտեսական մշակութիւնների ֆրասները լրիվ գումարով հատուցվում են այն դեպքում միայն, յերբ ցանձերն ամբողջովին փչացել են, իսկ մասնակի կերպով ֆրասվելու դեպքում, վճարվում է այդ գումարի համարադաստիան մասը: Որինակ, ծխախոտի ցանձի մեկ հեկտարը կարկտահարվել է 50%, հետևապես ֆրասը կկազմի 450 ուրլի:

Կոլտնտեսականների և մենատնտեսների մոտ պարտադիր կոպարային կարգով ապահովագրվում են ձիերը, ուղտերը, շորիներն ու ավանակները մեկ տարեկան և ավելի բարձր հասակում և խոշոր յեղջյուրավոր անասուններ վեց ամսական և ավելի բարձր հասակում:

Կոլտնտեսականների մոտ ձիերը, ուղտերը, շորիներն ու ավանակները, ինչպես նաև խոշոր յեղջյուրավոր անասուններն ապահովագրվում են այն ջանակութեամբ միայն, վորը թույլատրված է կոլտնտեսականին: Բացի այդ, կոլտնտեսականների և մենատնտեսների մոտ պարտադիր կոպարային կարգով բոլորովին չեն ապահովագրվում՝ այծերը, վոչխարներն ու խոզերը:

Գյուղատնտեսական անասուններ ընկնելու դեպքում Պետապը ապահովագրական վարձատրություն կոլտնտեսականներին, բանվորներին, ծառայողներին և աշխատավոր մենատնտեսներին վճարում է որենքով սահմանված չափով: Կոլտնտեսականներին, բանվորներին և ծառայողներին ապահովագրական վարձատրություն արվում է հետևյալ գումարներով:

1. Մոշոր յեղջյուրավոր անասունների համար, 6 ամսականից մինչև մեկ տարեկան հասակում 70 ուրլի մեկ զլխին, մեկ տարեկանից և ավելի բարձր՝ 140 ուրլ:

2. Գոմեշների և մատակների համար 180 ուրլի:

3. Ձիերի, շորիների և ուղտերի համար 1-ից մինչ 2 տարեկան հասակում 70 ուրլի, 2 տարեկան և ավելի բարձր 150 ուրլի:

4. Ավանակների համար 1-ից մինչ 2 տարեկան հասակում 25 ուրլի, իսկ 2 տար. և ավելի բարձր 55 ուրլ:

Գյուղատնտեսական անասունների համար արվող ապահովագրական վարձատրության չափը մենատնտեսությունների և վոչ-կոպերացված տնայնագործների համար ավելի ցածր է քան կոլտնտեսությունների համար, այն է.

1. Մոշոր յեղջյուրավոր անասունների համար, 6 ամսականից մինչև մեկ տարեկան հասակում 65 ու., իսկ մեկ տարեկան և ավելի բարձր հասակում՝ 130 ու.:

2. Գոմեշների մատակների համար մեկ տարեկան և ավելի բարձր հասակ 175 ուրլ:

3. Ձիերի, շորիների և ուղտերի համար 1-ից մինչև 2 տարեկան հասակում 65 ուրլ., իսկ 2 տ. և ավելի՝ բարձր՝ 140 ուրլի:

4. Ավանակների համար մեկից մինչև յերկու տարեկան հասակում 25 ուրլ. իսկ 2 տ. և ավելի բարձր՝ 55 ուրլի:

Այն գույքը, վորը պատկանում է կուլտական տնտեսություններին, վորոնք գյուղատնտեսական հարկ վճարում են անհատական կարգով, այն անձանց, վորոնք դասված են յեկամտանակ վճարողների 3-րդ կատեգորիայի շարքին, ինչպես նաև ընտրական իրավունքներից զրկված այլ անձանց գույքը, վոչ պարտադիր և վոչ կամավոր կարգով չի ապահովագրվում:

### ՎՈՐՔԱՆ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՎՃԱՐՈՒՄՆԵՐ Ե ԳԱՆՁՈՒՄ ՊԵՏԱՊԵ ԿՈՒՏՆՏԵՍԱԿԱՆՆԵՐԻՑ ՅԵՎ, ԱՇԻԱՏԱՎՈՐ ՄԵՆԱՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՑ

Շենքեր և տնայնագործական շարհետանոցներ ապահովագրելու համար կոլտնտեսականները, բանվորները և ծառայողներն ու աշխատավոր մենատնտեսությունները, պետապին վճարում են տարեկան՝ Յերեվանում, Լենինականում, Կիրովականում, Վաղարշապատում, Գրիշանում, Նոր-Բայազետում և Գորիսում 70 կոպ. ապահովագրական գումարի յուրաքանչյուր 100 ուրլուց: Այսպես, որինակ, յեթե Կիրովական քաղաքում կոլտնտեսականին պատկանող շենքը պարտադիր կոպարային ապահովագրության կարգով գնահատված և ապահովագրված է 3000 ուրլ. գումարով, ապա նա վճարում է Պետապին տարեկան ընդամենը 21 ուրլի:

Մատղաշ խոշոր յեղջյուրավոր անասունները 6 ամսականից մինչ մեկ տարեկան հասակում և մատղաշ ձիերը, շորիները,

ուղաբերն ու ավանակները մեկից մինչև յերկու տարեկան հաս-  
կում, ինչպես և կոլտնտեսություններում, կոլտնտեսականների  
և մենատնտեսների մաս ապահովագրվում են առանց ապահովա-  
գրական վճարումների գանձելու, այսինքն, ձրիաբար:

Այդ արտոնությունը սահմանված է նրա համար, վորպեսզի  
կոլտնտեսականներն ու մենատնտեսները (նաև կոլտնտեսություն-  
ները) ավելի մեծ քանակությամբ գյուղատնտեսական մատղաշ  
անասուններ աճեցնեն և դրանով իսկ նպաստեն կենդանարուժու-  
թյան զարգացման պետական պլանի կատարման գործին:

Մտաքած անասունների համար կոլտնտեսականները, բան-  
վորներն ու ծառայողները Պետապին վճարում են՝

1. Մեկ ձիու, ջորու և ուղտի համար գյուղական վայրե-  
րում 11 ա. 40 կոպ., իսկ Յերևանում, Լենինականում, Կիրովա-  
անում, Վաղարշապատում, Դիլիջանում, Նոր-Բայազետում և  
Գորիսում 12 ա. 53 կոպ.:

2. Մեկ ավանակի համար գյուղական վայրերում 4 ա. 18 կ.  
թուփ Յերևանում, Լենինականում, Կիրովականում, Վաղարշապա-  
տում, Դիլիջանում, Նոր-Բայազետում և Գորիսում 4 ա. 59 կոպ.:

3. Մեկ գոմեջի և մատակի համար ՀՍՍՀ բոլոր վայրերում  
7 ա. 83 կ.:

4. Մեկ խոզը յեղջյուրավոր անասունի համար ՀՍՍՀ բոլոր  
վայրերում 6 ա. 9 կոպ.:

Աշխատավոր մենատնտեսությունները գյուղատնտեսական  
անասուններ ապահովագրելու համար վճարում են Պետապին  
տարեկան:

1. Մեկ ձիու, ջորու և ուղտի համար գյուղական վայրե-  
րում 13 ա. 86 կոպ., իսկ վերը հիշատակված քաղաքներում 15 ա.  
26 կոպ.:

2. Մեկ ավանակի համար գյուղական վայրերում 5 ա. 45 կոպ.,  
իսկ վերը հիշատակված 7 քաղաքներում 6 ուռ.:

3. Մեկ խոզը յեղջյուրավոր անասունի համար ՀՍՍՀ բոլոր  
վայրերում 7 ա. 41 կոպ.:

4. Մեկ գոմեջի կամ մատակի համար 9 ա. 89 կոպ.:

Գարնան և աշնան ցանքերն ապահովագրելու համար կոլտն-  
տեսականների և մենատնտեսների ապահովագրական վճարումները  
հաշվարկվում են յուրաքանչյուր տնտեսությունից առանձին ըստ  
ցանքային պլանի: Պլանից դուրս ցանված տարածության համար  
ապահովագրական վճարումներ չեն հաշվարկվում, իսկ միասնեը

հատուցվում են փաստորեն ցանված տարածության համաձայն:  
Դա նույնպես է, վոր այն օտարաբույուները, վոր կուլտեսու-  
կաններն ու մենատնտեսները պետական պլանից դուրս են ցանում  
Պետապին ապահովագրում և ձրիաբար:

Պտղատու և խաղողի այգիների ապահովագրական վճարում-  
ները վորոշվում են փաստորեն հաշվի առնված տարածության  
համաձայն, իսկ կտավատի ցանքերը, ինչպես և կոլտնտեսու-  
թյուններում, յերաշտից ապահովագրվում են միանգամայն  
ձրիաբար:

Դյուղատնտեսական մշակույթների համար Պետապը կոլտն-  
տեսականներից ապահովագրական վճարումներ գանձում է ավե-  
լի ցածր տարիքային դուռքներով, քան աշխատավոր մենատն-  
տեսություններից: Այսպես, որինակ, մեկ հեկտար ցորենից  
կոլտնտեսականը վճարում է 4 ա. 30 կոպ., իսկ մենատնտեսը 6 ա.  
12 կոպ.:

Վորպեսզի պարզ լինի յուրաքանչյուր կոլտնտեսականի  
համար թե վորքան է վճարում իր ցանքերի ապահովագրության  
համար և վորքանով ավելի քիչ է վճարում իր հարևան մենատն-  
տեսից բերում ենք հետևյալ աղյուսակը:

ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՆԵՍՆԵՍ ԵՍԿՎՈՒՅՑԻ ԱՆՈՒՆԸ	Վորքան է վճարում ապահ- վակ մեկ հեկտ. համար			
	Կոլտնտես.		Մենատնտես.	
	Ուռ.	Կոպ.	Ուռ.	Կոպ.
1. Հացահատ. մշակույթ- ների համար (ցորեն, գարի և այլն) . . . . .	4	30	6	12
2. Արևվածադի . . . . .	10	92	11	90
3. Յանդի խոտերի . . . . .	9	90	12	24
4. Սիլոսային մշակույթ- ների . . . . .	4	30	6	12
5. Բանջարանոցի . . . . .	20	25	27	60
6. Բստանների . . . . .	22	50	31	08
7. Պտղատու այգին. պը- տուղների . . . . .	58	13	75	90
8. Խաղողի այգիներ . . . . .	90	68	115	50
9. Կարտոֆիլի . . . . .	9	90	13	21
10. Վուշի . . . . .	4	29	7	92
11. Բամբակի . . . . .	4	20	5	28
12. Չալթուկի . . . . .	25	20	35	70
13. Մխախտի . . . . .	65	70	99	—

Կայանեստակամների առնաձայն մեկնանքսուրյունների համար պարտադիր կապարային ապահովագրության գծով հասուկ արճուհու-րյուններ են սահմանված, բայց այդ արտոնությունները ոգտվում են այն տնտեսությունները միայն, վորոնց կազմի մեջ մտնում են Պորհրդային Միության հերոսներ, զինվորներ, ԽՍՀՄ շքանշաններով պարգևատրվածները, այն կոլտնտեսությունների և մենատնտեսների ընտանիքները, վորոնք պայքարելով գյուղի սոցիալիստական վերակառուցման և հանրային սե-փականության պաշտպանության համար տուժել են դասակար-գային թշնամու վրեժխնդրության պատճառով, ինչպես նաև այն անտառային աշխատողների ընտանիքները, վորոնք սպանվել են պետական գույքի պաշտպանության հետ կապված իրենց պարտա-կանությունները կատարելիս: Այդ արտոնությունը կոլտնտեսա-կաններն ու մենատնտեսները ստանում են ապահովագրական վճարումներից 50 % զեղչելու ձևով: Յեթն կոլտնտեսականի ըն-տանիքում կան յերկու և ավելի զինվորականներ կամ արտոնու-թյան իրավունք ունեցող այլ անձինք, ապա նա լրիվ ազատվում է ապահովագրական վճարումներից:

Բացի այս արտոնություններից կոլտնտեսականների և մե-նատնտեսների տնտեսությունները, վորոնք տուժել են այնպիսի տարերային ազդեցություններից, վորոնցից սովյալ վայրում ապահովա-գրություն չի անցկացվում, մասնակի կերպով ապահովագրա-կան վճարումներից ազատվում են: Այդ արտոնության չափը շր-ջանային ապահովագրական հանձնաժողովը վորոշում է նայած կրած վնասներին և տնտեսության իր ունակությանը, բայց հա-մենայն դեպս վոչ ավելի քան ապահովագրական վճարումների 90 %-ը:

Տարերային աղետների պատճառով արտոնություն տալու համար վորպես հիմք ծառայում են շրջողբաժնի, գյուղխորհրդի տված տեղեկանքները և այլ ստուգված նյութեր:

Ապահովագրական հանձնաժողովի վորոշումներն ապահովա-գրական վճարումները զեղչելու վերաբերյալ չեն կարող վորպես հիմք ծառայել այլ պետական պարտավորությունների գծով ար-տոնություններ տալու համար:

Կոլտնտեսականների և մենատնտեսների այն տնտեսություն-ները, վորոնք արտոնություններ են ստացել, վնաս սեղի ունենա-լու դեպքում, (անասունների անկում, կարկտահարում և այլն) ապահովագրական վարձատրություն ստանում են նույն չափով ինչ չափով և արտոնություններ չունեցող տնտեսությունները

Այժմ ցույց տանք որինակով թե ինչպես են վորոշ-վում կոլտնտեսականից և մենատնտեսից հասանելիք ապա-հովագրական վճարումները:

Յենթադրենք, վոր կոլտնտեսական Դրիգոր Մանուկյանը վազարշապատում ունի կես հեկտար խաղողի այգի, քառորդ հեկ-տար բանջարանոց և մեկ կով յերեք տարեկան:

Կես հեկտար խաղողի այգու համար կոլտնտեսականը

վճարում է . . . . .	45—34
Քառորդ հեկտար բանջարանոցի համար . . . . .	5—63
Մեկ կովի համար . . . . .	6—09
	<hr/>
	57—06

Յենթադրենք, վոր Մանուկյանը գանվում է կարմիր բանա-կում, հետևապես զեղչվում է ապահովագրական վճարումների գումարի 50% (28—53), իսկ ֆուսցած 28 ու 53 կոտ, կոլտնտե-սական Մանուկյանը պետք է մուծի Պետպին որենքով սահման-ված ժամկետներին:

Յենթադրենք, վոր Ախտայի շրջանի մենատնտես Սուրեն Մարտիրոսյանն ունի 2 հեկ. ցորենի ցանք, մեկ ձի 5 տարեկան, 2 յեղ, 6—8 տարեկան, հորթ 8 ամսական և մեկ կով 5 տարեկան:

2 հեկտար ցորենի համար նա պետք է մուծի . . . . .	12—24
5 տարեկան մեկ ձիու համար . . . . .	13—86
2 յեղներև համար 7 ու 41 կ. . . . .	14—82
Ութ ամսական մեկ հորթի համար ապահովագրական վճարումներ չին գանվում . . . . .	—
Հինգ տարեկան մեկ կովի համար . . . . .	7—41
	<hr/>
	48—33

Ընդամենը մենատնտես Մարտիրոսյանից պահանջվում է ապահովագրական վճարումներ 48 ու 33 կ.: Բայց քանի վոր նրա վորդին կարմիր բանակային է, ուստի նրան զեղչ է տրվում այդ գումարի 50%-ի չափով, այն է՝ 24 ու 17 կ. Հետևապես Մար-տիրոսյան Սուրենը Պետպին մուծում է ընդամենը 24 ու 16 կոպ:

Յեթն կոլտնտեսականը կամ մենատնտեսը ապահովա-գրական վճարումն որենքով սահմանված ժամկետում չի մուծում, ապա ալգպիսին նրանից գանվվում է հարկադրա-կան կարգով, դրան ավելացնելով տույժը 0,20% յուրա-քանչյուր ժամկետանց որվա համար:

**ԻՆՉ ԿԱՐԳՈՎ ԵՆ ՍՊԱՆՈՎԱԳՐԱԿԱՆ ՎՃԱՐՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐՈՒՄ ԿՈՒՆՏՆԵՍՏՐԱԿԱՆՆԵՐՆ ՈՒ ՄԵՆԱՏՆԵՍՆԵՐՆ**

ԽՍՀՄ Ժողկոմխորհի 1935 թ. ոգոստոսի 3-ի գյուղխորհուրդների ֆինանսական աշխատանքը բարելավելու վերաբերյալ վորոշմամբ ապահովագրական վճարումների գանձման կարգը փոփոխված է:

Այդ վորոշման մեջ ասված է, «1935 թ հոկտեմբերի 1-ից վերակառուցել գյուղխորհուրդների գանազան տեսակի լիտզորների միջոցով գյուղում հարկային և ապահովագրական վճարումներ գանձելու պրակտիկան և լիկվիդացիայի յենթարկել հարկային ու ապահովագրական վճարումներ գանձողների ինստիտուտը: Սահմանել, վոր հարկային և ապահովագրական վճարումներ գյուղխորհրդի շենքում պետք է ընդունի գյուղխորհրդի գանձապահը, կամ այն անձը, վորին գյուղխորհուրդը կհանձնարարի գանձապահի պարտականությունները»:

Միաժամանակ, խիստ կարգ է սահմանված, վորով վոր մի ապահովագրական վճարում գյուղխորհուրդը չի կարող ապահովագրվողներին ընդունել առանց Պետնիշի (Մոսկվայում) կողմից սահմանված ձևի անդորրագիր տալու:

Պարզ է, վոր նման կարգ սահմանված է նրան համար, վորպեսզի ապահովված լինի ապահովագրական վճարումների ճիշտ գանձումը և թույլ չտրվեն խեղաթյուրումներ ու չարաշահություններ:

**ՎՈՐ ԴԵՊՔԵՐՈՒՄ Ե ՊԵՏԱՊԸ ՀԱՏՈՒՑՈՒՄ ԿՈՒՆՏՆԵՍՏՐԱԿԱՆՆԵՐԻ, ԿՈՒՆՏՆԵՍՏՐԱԿԱՆՆԵՐԻ ՅԵՎ ՄԵՆԱՏՆԵՍՆԵՐԻ ՎՆԱՍՆԵՐԸ ՅԵՎ ՎՈՐ ԴԵՊՔԵՐՈՒՄ ԶԻ ՀԱՏՈՒՑՈՒՄ**

ԽՍՀՄ Ժողկոմխորհի վորոշման մեջ ապահովագրական փաստների հատուցման մասին պարզորոշ ասված է՝

«Պետապը հատուցում է փաստներ փչացած ապահովագրված գույքի համար այն դեպքերում միայն,— յերբ այդ գույքի կորուստը հետեվանք է լինում տարերային աղետների և դժբախտ պատահարների, անկախ գույքատիրոջ կամքից»:

Այսպիսով, ուրեմն, փաստների պատճառներ վորոշելը հիմա-

կան հարց է, ուստի այդ աշխատանքը յուրաքանչյուր ակտիվիստ կողմնակալների և ապահովագրական աշխատողի կարևորագույն խնդիրն է հանդիսանում:

Այնուհետև, որենքում ասված է, վոր «Պետապը փաստներ չի հատուցում այն բոլոր դեպքերում, յերբ ապահովագրված գույքը փչացել կամ փրասվել է ապահովագրվողի (կուրանտեսուլթյան, կուրանտեսուկանի և մանատեսուխի) մեղքով, այսինքն ապահովագրվողի ակնհայտ անտեսեմովարուլթյան, հասարակական սեփականության, պաշտպանության բացակայության կամ չարամիտ գործողությունների հետևանքով»:

Նույն որենքում յուրաքանչյուր տեսակի գույքի նկատմամբ ճիշտ ցուցումներ են տրվում այն մասին, թե գույքի կորստի ինչպիսի պատճառներ հիմք չեն կարող ծառայել փաստների հատուցման համար:

Ավելի մանրամասն ցուցումներ փաստներ չհատուցելու մասին որենքը տալիս է գյուղատնտեսական անասունների, գյուղատնտեսական մշակութիների, շենքերի, ինվենտարի և այլ գույքի վերաբերյալ:

Գյուղատնտեսական անասունների ապահովագրական գծով Պետապը փաստներ չի հատուցում հետևյալ դեպքերում՝ ա) յեթե անասունի անկման պատճառը յեղել է ախպիսի հիվանդություն կամ դժբախտ դեպք, վորն առաջ է յեկել ակնհայտ անտեսեմովարուլթյան հետևանքով (անասունին անբավարար կերակրելն ու այդ պատճառով ուժասպառ դարձնելը, կեղտոտ կեր տալը սխալ յծելը, անպահան պայմաններին չհարմարեցրած շենքերում պահելը, հիվանդ անասունին վատ խնամելը, անասնաբուժին կամ գյուղխորհրդին անասունի հիվանդության մասին չհայտնելը և այլն), բ) յեթե անասունի անկման պատճառը յեղել է անխնա շահագործում կամ փաստարար վերաբերմունք (անասունին իր ուժերից վեր ծանրաբեռնելը, անասունին ձեծելը, անասունին քշելը, փաստակալ կեր տալը, տաքացած անասունին սառը ջուր տալը և այլն), գ) յեթե անասնաբուժը կամ անասնաբուժակը կվերջի, թե ընկած անասունը վարակվել է այն պատճառով, վոր նրա տերը չի կատարել վարակիչ հիվանդությունների դեմ պայքարելու



վերաբերյալ պարտադիր վորոշումները և անասնաբուժական կանոնները:

Որենքի այս կետը խոշոր նշանակություն ունի կոլտնտեսականների վողջ մասսայի ուշադրությունը գյուղատնտեսական տնտեսուհիների անկման դեմ պայքարի վրա բեկեբեկում իմաստով: Այսպիսով, որենքի պետապահովագրության որենքի յուրաքանչյուր կետ իր սուր ծայրով ուղղված է տնտեսավարության դեմ, կոլտնտեսության մեջ խժկված գասակարգային թշնամու վերաբերմամբ հարկ յեղած զգոնությունը թուլացնելու դեմ և այն անձանց դեմ, վորոնք այս կամ այն ճանապարհով ուղում են ֆրասել կոլտնտեսությանն ու մեր վողջ ժողովրդական տնտեսությունը:

Դյուղատնտեսական մշակույթների ապահովագրության վերաբերյալ որենքը խթանում է ցանքերի պլանի կատարման և գերակատարման ու բերքափության բարձրացման համար մղվող պայքարը:

Որենքում ասված է՝

«Պետապը գյուղատնտեսական ցանքերի տիրոջ վնասները չի հատուցում հետևյալ դեպքերում՝ ա) լեթե փչացած ցանքը չի կրկնացանվել թեև անհրաժեշտ է յեղել այդ և հնարավոր ըստ տարվա լեղանակի, բ) յեթե տնտեսությունը տուժած տարածություն վրա անհրաժեշտ միջոցներ ձեռք չի տուել բույսի հետագա մշակման և խնամքի համար, ինչ վոր սովորաբար անում են ուրիշ տնտեսություններ վնասները պակասեցնելու համար (քաղհան, բուկ լից և այլն), գ) յեթե տարերային աղետը տեղի յե ունեցել տարվա այն ժամանակ, յերբ տվյալ վայրի և տվյալ տարվա պայմաններով ապահովագրական մշակույթի բերքն արդեն պետք է հավաքված լիներ»:

Որենքի այս կետը պարտավորեցնում է մեզ բուրբիս և առաջին հերթին կոլտնտեսականների վարչություններին ու հարժամային կոլտնտեսություններին պայքարել վորպեսզի բերքը ժամանակին հավաքվի, ինչպես մինչև տարերային աղետ տեղի ունենալը՝ նույնպես և դրանից հետո:

Այդպես է մեզ սովորեցնում ընկ. Ստալինը

«Դուք գիտեք, վոր ամենից պատասխանատու գործը

հացահատիկային տնտեսության մեջ բերքահավաքն է: Բերքահավաքը սեզոնային գործ է և նա պատել չի սիրում: Ժամանակին հավաքեցիր՝ շահեցիր, ուշացար բերքահավաքի գործում՝ տանուլ տվիր» (ընկ. Ստալինի՝ առաջավոր կոմբայնավարների և կոմբայնավարուհիների 1935 թ. 1/12 խորհրդակցությունում արտասանած ճառից):

Պարտադիր կոպարային ապահովագրության որենքում ասված է՝

«Պետապը չի հատուցում շենքեր, ինվենտար և այլ գույք այրվելու պատճառով առաջացած վնասները, յեթե այդ վնասները տեղի յեն ունեցել տնտեսության կողմից հակահրդեհային պաշտպանության կանոնները չկատարելու հետևանքով (վառարաններն ու ծխանցքները վոչ կանոնավոր պահպանելը, շենքի կամ մառանի մոտ խարույկ վառելը, դյուրավառ նյութերն անփույթ պահելը և այլն), ինչպես նաև այն դեպքերում, յեթե հրդեհն առաջացել է սղի քաշելու կամ կոպիտ անզգուշություն պատճառով»:

Մեր առաջիկա խնդիրն է՝ յուրաքանչյուր կոլտնտեսության մեջ և յուրաքանչյուր գյուղում կազմակերպել հրդեհ խումբ, մասնակից անելով այդ աշխատանքին լավագույն ախտիվիստ-կոլտնտեսականներին, սիստեմատիկորեն վերստուգել և հետևել կոլտնտեսային գույքի, հրդեհային ինվենտարի դրուկյունը, միշտ լինել զգոն և թույլ չտալ կուլակային տարերին վորևե վտանձգություն այս բնագավառում:

Կոլտնտեսականներ և կոլտնտեսուհիներ՝ դասակարգային թշնամին քնած չի, պաշտպանեցեք կոլտնտեսային գույքը հրդեհներից:

ԿՈՒՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ, ԿՈՒՏՆՏԵՍԱԿԱՆԻ ՅԵՎ ՍԵՆԱՏՆՏԵՍԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ԱՊՈՆՈՎԱԳՐԱԿԱՆ ԳՈՒՅՔԻ ՓԶԱՆԱԼՈՒԿԱՍ ՎՆԱՍՎԵԼՈՒ ԴԵՊՔՈՒՍ

Վորպեսզի հնարավոր լինի ժամանակին և ճիշտ վորոշել թե՛ վոր չափով և տուժել տնտեսությունը տարերային աղետից կամ դժբախտ դեպքից, գույքատերերը՝ կոլտնտեսությունը, կոլտնտեսականը և մենատնտեսը պարտավոր և ըստ հնարավորության շուտ անհապաղ, հայտնել գյուղխորհրդին կամ շրջանային ապահովագրական տեսչին ապահովագրված գույքի փչանալու կամ վնասվելու մասին: Այդ դիմումը, վորպես կանոն պետք և լինի գրավոր:

Դիմումի մեջ պետք և ճիշտ նշված լինի՝ յերբ և ինչպիսի տարերային աղետ և տեղի ունեցել (հրդեհ, կարկտահարում և այլն) և ինչպիսի գույք և տուժել ու մտավորապես պատճառած վնասները չափը:

Վնասների մասին դիմումներ տալու համար որենքում սահմանված են ժամկետներ, այն է՝ ա) վոչ ուշ քան անասունի անկման պահից 24 ժամվա ընթացքում, բ) վոչ ուշ քան հերդեհ, հեղեղում կամ այլ տարերային աղետ տեղի ունենալու օրվանից 48 ժամվա ընթացքում, և վերջապես գ) վոչ ուշ քան հինգ օրվա ընթացքում այն օրվանից հաշված, յերբ հաստատվել և գյուղատնտեսական մշակույթների՝ կարկտահարումից, տարափից, փոթորկից, թրշումից, փտումից, ցրտահարումից և վնասվելու հանգամանքը: Վնասների մասին դիմում տալուց հետո ապահովագրվող կոլտնտեսությունը, կոլտնտեսականն ու մենատնտեսը պետք և կազմակերպի գույքի պահպանության գործը՝ թույլ չտա հափըրշտակելու և փչացնելու այն, ինչպես նաև ոժանդակի Պետպին ճիշտ վորոշելու հրդեհի պատճառներն ու վնասների չափը: Կարկտահարում տեղի ունենալու դեպքում միջոցներ ձեռք առնի վորպեսզի ցանքերի չվնասված մասը չտրորեն անասունները, խոկ անհրաժեշտ դեպքում, փրկի ցանքերը լրացուցիչ մշակմամբ: Յե-

թե ընկնում և կոլտնտեսականի կամ մենատնտեսի անասունը, ապա անասնատերը պարտավոր և պահել անասունի դիակը գյուղական կամ շրջանային ապահովագրական հանձնաժողովին ներկայացնելու համար: Բայց յեթե անասունն ընկնում և սուբ վարակիչ հիվանդության պատճառով (ժանտախտ, սապ, սրբիբախտ և այլն), ապա անասնատերը պարտավոր և անմիջապես հեռացնել (թաղել) դիակը գյուղխորհրդի, միլիցիայի և վոչ պակաս յերկու վկայի ներկայությամբ, վորպեսզի չտարածվի վարակիչ հիվանդությունը:

Այստեղ պետք և ընդգծել, վոր յեթե գույքատերը կեղծ և հնարովի դիմումներ և տալիս Պետպին իր տնտեսության մեջ իբր թե տեղի ունեցած վնասների մասին, ապահովագրական վարձատրություն ստանալու հարմար, ապա ապահովագրվողները՝ կոլտնտեսությունը, կոլտնտեսականը կամ մենատնտեսը քրեական պատասխանատվության և յենթարկվում պետությանը խաբելու փորձեր տանելու համար: Յուրաքանչյուր ակտիվիստ — կոլտնտեսական պետք և պայքարի նման փորձերի դեմ և պաշտպանի պետության շահերը:

**ՈՎՔԵՐ ՅԵՎ ԻՆՉՊԵՍ ԵՆ ԱԿՏԵՐ ԿՍՉՄՈՒՄ ԱՊԱՀՈՎԱԳՐՎԱԾ ԳՈՒՅՔԻ ՓԶԱՆԱԼՈՒ ԿԱՄ ՎՆԱՍՎԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ապահովագրական աշխատանքների մեջ գլխավոր և վճարական մոմենտը գույքի կորստի ճիշտ պատճառները վորոշելն է հանդիսանում, տուժած գույքի գննության ակտ կազմելը և, վերջապես առաջացած մնասնների ճիշտ չափը վորոշելը: Այս նպատակով որենքի համաձայն, շրջաններում գյուղերում կազմակերպված են, յնայուն հանձնաժողովներ: Գյուղական հանձնաժողովներն ակտեր կազմում են մասը փաստների մասին միայն, այն է մասը հրդեհներ տեղի ունենալու դեպքում, յերբ գույքի արժեքը 150 աուրյուց ավելի չէ և անասունների անկման առանձին դեպքերում: Ընդվորում, նույնիսկ այդպիսի մասը փաստների ժամին ակտեր կազմելու և վարձատրության չափը վորոշելու աշխատանքներին անպայման պետք է մասնակցեն գյուղական ապահովագրական հանձնաժողովի վոչ պակաս քան յերեք անդամը:

Հաճախակի և մասսայաբար գյուղատնտեսական անասուններ ընկնելու, կարկտահարումից կամ այլ տարերային աղետներից գյուղատնտեսական մշակութիւններ վնասվելու, ինչպես նաև խոշոր հրդեհներ տեղի ունենալու դեպքերում, ակտեր կազմում են բացառապես շրջանային ապահովագրական հանձնաժողովները շրջանային ապահովագրական տեսչի պարտադիր մասնակցությամբ: Ակտեր կազմելիս, գույքի փչանալու կամ վնասվելու պատճառները վորոշելիս, ինչպես նաև վնասների չափը սահմանելիս հանձնաժողովն անպայման պետք է այդ աշխատանքին մասնակից անի համապատասխան մասնագետի՝ գյուղատնտեսին, անասնաբուժին կամ տեխնիկին: Բացի այդ, ապահովագրված գույքի փչացման կամ վնասման մասին ակտ կազմելիս պետք է անպայման ներկա գտնվի տուժած գույքի տերը, այն է՝ յեթե գույքը կորսնտեսային և կորսնտեսության վարչության նախագահը կամ կորսնտեսության կողմից հատկապես լիազորված անձը, իսկ յեթե գույքը պատկանում և կորսնտեսականին կամ մենատնտեսին, ապա տնտեսության գլուխը կանգնած անձը կամ նրա ընտանի-

քի չափահաս անդամը: Ինչպես գյուղական նույնպես և շրջանային ապահովագրական հանձնաժողովը պետք է անպայման մեկնի հրդեհի, անասունների անկման կամ գյուղատնտեսական մշակութիւնների վնասման վայրը, մասնամասն և բազմակողմանի գննի տուժած գույքը, պարզի փաստների պատճառներն ու չափը: Մասնազրննին հետազոտություն կատարելուց, այսինքն, հրդեհի վայրը, անասունի դիակը, փնտսված գյուղատնտեսական մշակութիւնը զրննելուց հետո միայն ապահովագրական հանձնաժողովը իրավունք ունի վերջնականապես վորոշել ապահովագրական վարձատրություն տալու կամ չտալու հարցը: Իսկ առանց այդ աշխատանքի ակտեր կազմելն ու մտաւորապես փնտսելի չափը վորոշելը չի թույլատրվում: Սրա դեմ պետք է պայքարի յուրաքանչյուր ակտի լիստ-կորսնտեսական:

Ինչպես առաջինը, գույքի փչացման կամ փնտսման մասին ակտեր պետք է կազմել անմիջապես, այն է՝ ա) հրդեհի և այլ տարերային աղետների վերաբերյալ աղետի մասին ապահովագրվողից տեղեկություն ստանալուց յոթն օրվա ընթացքում բ) անասունների անկման վերաբերյալ վոչ ավելի ուշ քան անասնատերերից այդ մասին տեղեկություն ստանալուց 24 ժամվա ընթացքում գ) գյուղատնտեսական մշակութիւնների փչացման կամ փնտսման վերաբերյալ՝ հինգ օրվա ընթացքում, յեթե աներածեղտ է կրկնացանել կամ բերքը հավաքել, իսկ մնացած դեպքերում շրջանային ապահովագրական հանձնաժողովի սահմանած ժամկետներում: Այս բոլոր ակտերը պետք է ստորագրեն գյուղական կամ շրջանային հանձնաժողովները այն անդամները, վորոշը մասնակցել են ակտ կազմելուն փաստներ վորոշելու աշխատանքներին, քանի վոր հանձնաժողովի յուրաքանչյուր անդամ, փնտսելի վորոշմանը մասնակցողն անձնապես—պատասխանատու յե ակտի ճիշտ լինելու համար:

Ապահովագրական կանոններում ասված է՝ «Տվյալ գյուղական կամ քոջանային հասննաժողովի կազմից կազմված ակտի նրոս լինելու համար պտտախաճատու յեմ այդ հասննաժողովի բոլոր անդամները, իսկ կեղծ ակտեր, կամ իրենց մեջ օուս տեղեկություններ պտուստեղոպ ակտեր կազմելու համար հանցապարտերը պտտախաճատուստեղոպ յեմ յեմարկվում հանրային սեփականության պտտախաճատուստեղոպ վերաբերյալ օտեննալ»: Ինչ և նշանակում այս: Այս նշանակում է, վոր որենքի նման նախագագուչացումը պետք է ստիպի շրջանային և գյուղական ապահովագրական հանձնաժողովի

յուրաքանչյուր տնտեսական ուղի ուղով վերաբերվել գեպի ապահովագրական դեպքի պատճառներն և ապահովագրական վարձատրութեան չափը վորոշելու գործում էր ունեցած պարտականութեանները:

Ապահովագրական հանձնաժողովի անդամների դասակարգային պոտենցիալները պետք է ոգնի նրանց գրեթե բոլոր դասակարգային թշնամու՝ սոցիալիստական պետութեանը խաբելու ամեն տեսակի փորձերը: Յուրաքանչյուր ակտիվիստ—կոլտնտեսական պետք է ամեն կերպ ոժանգակի ապահովագրական հանձնաժողովին: Քանի վոր առանց վողջ աշխատավոր մասնանների շահութեան չի կարելի ստանալ այն արդյունքը, վոր սպասում են պետական ապահովագրութեանը կուսակցութեանն ու կառավարութեանը:

«Կոյսնեստեղաններ—կոյսնեստեղաններ՝ հայսնեցեք գյուղական յեվ քոչանային ապահովագրական հանձնաժողովներին բոլոր սխալ վնասումներին, ապահովագրական վնասներ վնասելը ապոշինի մեքեելու, բաժնեկալ վնասներ մասին»:

## ՊԵՏԱՊԻ ԶԵՆՆԱՐԿՈՒՄՆԵՐԸ ՀՐԴԵՂՆԵՐԻ, ՇԵՂԵՂՈՒՄՆԵՐԻ ՅԵՎ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՆԱՍՈՒՆՆԵՐԻ ԱՆԿՍԱՆ ԴԵՍ ՊԱՅԲԱՐԵԼՈՒ ՅԵՎ ԿԱՆԽԵԼՈՒ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ

Ինչպես արդեն ասացինք, Պետապը վոչ միայն զուսներ և հատուցում, այլև միջոցներ և ձեռք առնում հրդեհների, հեղեղումների և անասունների անկման դեմ պայքարելու և կանխելու համար: ԽՍՀՄ կենտրոնի և Ժողկոմխորհի 1934 թ. հուլիսի 27-ի վորոշմամբ կոպարային ապահովագրութեան վնասումներին ընդհանուր գումարի 15% ծախսվում է հրդեհների, հեղեղումների և անասունների անկման դեմ պայքարելու և կանխելու ձեռնարկումներ անցկացնելու համար: Այդ մասնանուսները ծախսվում են նոր անասնաբուժարաններ, ամբուլատորիաներ և մեկուսարաններ, հրդեհային դեպոններ և սարայներ կառուցելու և հները վերանորոգելու, հեղեղումներից պաշտպանող կառուցվածքներ, դեպի ջուրը տանող ճանապարհներ, ինչպես նաև արտեղյան և այլ ջրհորներ կառուցելու, հրդեհային սարքավորում, ինժեներար և գործիքներ անասնաբուժարաններին և ամբուլատորիաներին համար բնակարաններ, դեպոնայք, գործիքներ և սարքավորում ձեռք բերելու, բացառապես գյուղական վայրերի համար ստորին հրդեհ և անասնաբուժական աշխատողների կադրեր պատրաստելու և հակահրդեհային, անասնաբուժական ու սանիտարական ձեռնարկումներ մասսայականացնելու համար: Շրջանային գործադիր կոմիտեներն ու քոլխոսրնուրդներն այդ գումարները հատկացնում են առաջին հերթին այն գյուղերին և կոլտնտեսութեաններին, վերոնք ակտիվ պայքար են մղում հրդեհների, անասունների համաճարակ հիվանդութեաններին ու այլ տարերային աղետների դեմ:

Սակայն, վոչ ամեն տեղ են այդ միջոցները ձեռք առնվում: Այսպես, որինակ, Ղաճարվի կամունալ բաժնի վարիչը Պետապի բաց թողած գումարները հրդեհային դեպոնի շինարարութեան համար ոչտագործելու փոխարեն ծախսել է այլ նպատակի համար՝ աշխատավարձ վճարելու և այլն:

Ինչի մասին է վկայում այս: Այս վկայում է այն փաստի մասին, վոր դժբախտաբար մեզ մոտ դեռ ես կան մարդիկ, վորոնք չեն հասկանում կամ չեն ուզում հասկանալ այն որոշումների իմաստը, վոր հրատարակում է մեր կառավարութեանը կամ հասկանալով, խախտում են հեղափոխական որինականութեանը ջրանց դեմ պետք է զնապետն պայքար մղել, դրանց պետք է ուժեղ հարվածել:

## ԳԻՄՈՒՄՆԵՐ ՅԵՎ ԲՈՂՈՒՄՆԵՐ ՏԱԼՈՒ ՅԵՎ ԲՆՆԵԼՈՒ ԿԱՐԳԸ

Չնայած այն բանին, վոր որենքում ձիշտ նշված են վնասները պատճառները պարզելու և չափը վորոշելու ու ապահովագրական վարձատրությունն տալու ժամկետները, այնուամենայնիվ ապահովագրական աշխատողների, գյուղական ու շրջանային հանձնաժողովների մեջ պատահում են մարդիկ, վորոնք ժամանակին չեն կազմում ահաբե գույքի փչացման կամ վնասման մասին: Իժբախտաբար կան նաև այնպիսիները, վորոնք բյուրոկրատներն են վերաբերվում դեպի ապահովագրվողի պետքերը և մտնովանդ դեպի տուժած սնտեսությունները: Ահա այս դեպքում յուրաքանչյուր ապահովագրվող կոլտնտեսություն, կոլտնտեսական, բանվոր, ծառայող և աշխատավոր մենատնտես հնարավորություն ունի բողոք տալու ապահովագրական որդանների սխալ գործողությունների դեմ: Գյուղխորհուրդների և գյուղական ապահովագրական հանձնաժողովների սխալ գործողությունների դեմ բողոքներ արվում են շրջանային ապահովագրական հանձնաժողովին գրավոր ձևով, իսկ շրջանային ապահովագրական հանձնաժողովների և ապահովագրական տեսչի սխալ գործողությունների դեմ՝ ՀՍՍՀ Պետապի հանրապետական վարչություն (Յերեվան, Նալբանդյան փող. № 64): Յուրաքանչյուր բողոք վոչ ուշ քան տալու որվանից 10 որվա ընթացքում ուղարկությամբ և բազմակողմանի պետք և քննվի և ստանա իր լուծումը: Շրջանային ապահովագրական հանձնաժողովի նախագահը, վոր շրջագործկոմի նախագահի տեղակալն և հանդիսանում, անձնապես պատասխանատու յե ստացված բողոքները ժամանակին քննելու և վորոշելու համար:

Կոլտնտեսականներ, աշխատավոր մեհատնտեսներ՝

Գյուղխորհուրդների և գյուղական ապահովագրական հանձնաժողովների սխալ գործողությունների դեմ, հեղափոխական ուղինականությունը խախտողների դեմ բողոքներ տվեք ձեր շրջանային ապահովագրական հանձնաժողովին: Իսկ լեթե բողոքների բնությունը վորևե մեկը ձգձգի դիմեցեք ՀՍՍՀ Պետապի վարչությանը:

## ԿԱՄԱՎՈՐ ԳԵՐԿՈՂԱՐԱՅԻՆ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ԵՍՀՄ Կենտգործկոմի և Ժողկոմխորհի 1934 թ. հուլիսի 27-ի վորոշմամբ թույլատրված Ե Պետապին կամավոր գերկուպարային ապահովագրություն անցկացնելու գյուղական վայրերում և քաղաքներում:

Կոլտնտեսությունները կարող են կամավոր կերպով ապահովագրել իրենց շենքերը, ձեռնարկությունները, սարքավորումն ու ինվենտարը գույքի ինվենտար գնահատության և իսկական արժեքի միջև յեղած տարբերության սահմաններում, ապահովագրական որդանների գնահատությամբ: Այսպես, որինակ, յենթագրենք, վոր աղացի արժեքը կոլտնտեսության ինվենտար մատյանում նշված Ե ընդամենը 3000 ա.: Կոլտնտեսության վարչությունն իմանալով, վոր այդ աղացն անհամեմատ ավելի արժե, կամենում Ե լրացուցիչ կերպով ապահովագրել այն ավելի խոշոր գումարով, վորպետքի հրեհ տեղի ունենալու դեպքում հնարավորություն ունենա իր ստացած ապահովագրական վարձատրությամբ նույնանման նոր աղաց կառուցել: Կոլտնտեսությունն իր այդ ցանկության մասին հայտնում Ե շրջանային ապահովագրական տեսչին, վորը մասնագետների և կոլտնտեսության վարչության հետ միասին գնահատում Ե աղացը և պարզում, վոր այդ աղացն արժե վոչ թե 3000 ա. այլ, դիցուք 8000 աուր.: Այս դեպքում կոլտնտեսության վարչությունը կարող Ե աղացը լրացուցիչ ապահովագրել ևս 5000 աուր., այսինքն՝ աղացի ինվենտար գնահատության և իսկական արժեքի միջև յեղած տարբերության չափով:

Գյուղատնտեսական անասուններ կոլտնտեսությունը կարող Ե կամավոր գերկուպարային կարգով ապահովագրել պարտադիր կուպարային ապահովագրությամբ սահմանված կայուն նորմաների և ապահովագրական որդանների վորոշված լրիվ արժեքի միջև յեղած տարբերության չափով:

Մենք արդեն գիտենք, վոր ձիերը կոլտնտեսություններում պարտադիր կարգով ապահովագրվում են 160 աուր. գումարով: Կոլտնտեսության վարչությունը կամենում Ե իր ձիուն ապահո-

վազբենն այնպիսի գումարով, վարդազի այդ ձին ընկնելու դեպքում նա կարողանա նորը գնել: Իրա համար ապահովագրական տեսուչը անասնաբուժի և կոլտնտեսության վարչության նախագահի հետ միասին գնահատում է, կոլտնտեսության ձիուն, դիցուք, 1000 ուրբ. գումարով: Կոլտնտեսությունը կարող է իր ձիուն լրացուցիչ ապահովագրել 840 ուրբ. գումարով: Այստեղ պետք է ընդգծել, վոր ապահովագրության յինթակա յին տվյալ տնտեսության մեջ յեղած բոլոր նույն տեսակի անասունները:

Բացի այդ, ԽՍՀՄ Ժողկոմխորհն իր 1935 թ. սեպտեմբերի 17-ի վորոշմամբ ավելացրել է կոլտնտեսությունների և կոլաբնտեսականների այն որոշակիաների թիվը, վոր կարելի յե ապահովագրել կամավոր գերկոպարային կարգով: Այդ վորոշմամբ Պետպին թույլատրվում է կոլտնտեսությունների հատուկ և տեխնիկական մշակույթների ցանքերն ու պղպտուռ և խաղողի այգիների, բանջարանոցների և բոստանների բերքն ապահովագրել կամավոր գերկոպարային կարգով: Թված գյուղատնտեսական մշակույթները կարելի յե կոպարային ապահովագրության կայուն նորմաներից դուրս և մինչև դրանց լրիվ արժեքը լրացուցիչ ապահովագրել միջերման գներով, իսկ այն գյուղատնտեսական մշակույթների վերաբերմամբ, վորոնց համար միջերման գներ չեն սահմանված՝ բերքի լրիվ արժեքով ըստ կոնվենցիոն գների:

Որինակ, ինչպես հայտնի յե, բամբակի ցանքերի մեկ հեկտարը ՀՍՄՀ-ում կոպարային կարգով ապահովագրվում է 150 ուրբ. գումարով, իսկ վաղարշապատի շրջանի «Անաստված» կոլտնտեսության բամբակի բերքի մեկ հեկտարի արժեքը միջին հաշվով հավասար է 900 ուրբ.:

Կոլտնտեսությունը բամբակի ցանքերը կարող է լրացուցիչ ապահովագրել ևս 750-ական ուրբ. հեկտարը:

Միութենական կառավարության այդ վորոշումը կոլտնտեսային գյուղին հնարավորություն է տալիս ավելի լրիվ ապահովելու իր տնտեսությունը զանազան տեսակի տարեբայի աղետներից: Այդ վորոշման նշանակությունը պետք է իմանա յուրաքանչյուր կոլտնտեսական: Նա պետք է իմանա, վոր էտանի ավելի ապահովագրվի — այնքան էլ ավելի կստանա:

Ինչի հետևանք են պետական ապահովագրությանն առաջադրվող այս նոր պահանջները: Հետևանք են այն բանի, վոր կոլտնտեսությունները հարստանում են, ձեռք են բերում ավելի ու ավելի ինվենտար, շենքեր, անասուններ: Այժմ մեզ մոտ քիչ չեն

միլիոնատեր կոլտնտեսություններ, իսկ այդ միլիոնավոր գույքը պետք է պաշտպանել, պետք է ապահովագրություն լրիվ ապահովել զնաններից տարեբային աղետներ տեղի ունենալու դեպքում: Կոլտնտեսությունները՝ անցյալում աղքատ և մերկ՝ իսկ այսօր ունեվոր, լավ շորեր և կոշիկներ են ձեռք բերում, ունեն կովեր և հորթեր, խոզեր ու վոշխարներ: Այժմ, յերբ կոլտնտեսականներն ունեն այն, ինչ վոր պետք է պաշտպանել, նրանք խոշոր չափով շահագրգռված են պետական ապահովագրության գործում:

Կամավոր գերկոպարային կարգով կայուն նորմաներից և ինվենտար գնահատումից ավելի բարձր ապահովագրելու համար սահմանված են նույն տարիֆային գրուքները, վորոնցով ապահովագրական վճարումներ են գանձվում պարտադիր կոպարային ապահովագրության գծով: Այսպես, որինակ, յեթե կոլտնտեսության ձին ապահովագրելու համար պարտադիր կոպարային ապահովագրության գծով գանձվում է 4 ու 90 կ. ապահովագրական գումարի յուրաքանչյուր 100 ուրբուրց, այն է՝ 160 ուրբուրց գանձվում է կոլտնտեսությունից 7 ու 84 կոպ. տարեկան, ապա կամավոր գերկոպարային ապահովագրության գծով ապահովագրական գումարի, դիցուք, 320 ուրբուրց գանձվում է 15 ու 68 կ.:

Բացի այդ, կամավոր գերկոպարային ապահովագրության գծով ապահովագրական գրուքների նկատմամբ սահմանված են նույն արտոնությունները և զեղչերը, ինչ վոր նախատեսված են կոպարային ապահովագրության մեջ ապահովագրվողների նույն կատեգորիաների համար: Այդ արտոնություններն ու զեղչերն ապահովագրական վճարումների 50% -ից ավելի չպետք է լինեն:

Այսպես որինակ, «Անաստված» կոլտնտեսության մեջ պարտադիր կարգով ապահովագրվում են 10 կով, վորոնք գանվում են ապրանքային Ֆերմայում:

Ընդհանուր ապահովագրական գումարն ըստ նորմայի կազմում է  $(10 \times 145 ու.) = 1450 ու.$ : Կոպարային ապահովագրության վճարումը կկազմի  $(1450 \times 2,35\%) = 34 ու. 10 կ.$ : Այդ գումարից պետք է հանել 20% ջանի վոր անասունները գտնվում են ապրանքային ֆերմայում, հետևապես կմնա 27 ու 28 կ.: Բացի այդ, կովերին լավ պահպանելու համար կոլտնտեսությանը 10% զեղճ է արվում (27 ու 28 կ. — 3 ու 41 կ.) = 23 ու 87 կ.:

Յենթապրկնք, վոր «Անաստված» կոլտնտեսությունը նույն կովերին ապահովագրում է կամավոր գերկոպարային կարգով

600-ական աուբ. յուրաքանչյուրին, ընդամենը 6000 ա. գումարով: Գերկուպարային ապահովագրութեան վճարումները ընդհանուր գումարը կկազմի 131 ա. (6000 ա. 2,35%), Այդ գումարից պետք է հանել 30% (20+10%) այսինքն, 29 ա. 30 կ. (131 ա. — 39 ա. 30 կ.) = 91 ա. 70 կ.: Վորպեսզի կոլտնտեսականներն ու կոլտնտեսութեանները հնարավորութեամբ ունենան հեղուկութեամբ ոգտվելու կամավոր գերկուպարային ապահովագրութեանը, վճարումների ամբողջ գումարը Պետապին մուծվում է յերկու ժամկետում, այն է՝ 50% ապահովագրութեան կնքելիս, իսկ մնացած 50% վոչ ուշ քան յերկու ամսից հետո:

Կամավոր գերկուպարային ապահովագրութեան կնքվում է ուղած ժամանակը և մեկ տարով: Պետապի պատասխանատվութեանն սկսվում է առաջին վճարումը ձեռնարկելու և մուծելու պահից և վերջանում այն օրվանից, յերբ ապահովագրվողը սահմանված ժամկետին չի կատարում յերկրորդ վճարումը: Պետապը նույնպես չի հատուցում ֆեսանները, յեթե գույքը փչանում կամ ֆեսավում է ապահովագրվողի մեղքով՝ նրա բացահայտ անտնտեսավարութեան, գույքի պաշտպանութեան բացակայութեան և գույքատիրոջ չարամիտ գործողութեան հետևանքով:

Կոլսնեստուրյուններ, կոլսնեստականներ յե՛վ առխառնվար մեկտեղաններ՝ ապահովագրե՛մք ձեր գույքը կամավոր գերկուպարային կտրգով այդ է պահանջում ձեր բաները:



439

43.363